տէր տեցեր զեկեղեցի հօր իմաստութիւն. զոր
թգ նախանկար տեսութեամբ նշանակեալ մով-
սէս խորանաւն երկնահանգոյն 'ի սինա լե-
րին. լուսաւորելով փառօքն աստուծոյ:
Որ զխորհուրդ աննմանական տնօրէնութեանց
քո 'ի սրբոյ կուսէն. պատուիրելով տա-
պանակն ածային ոսկին կտակարանաց
բանին աստուծոյ. փառաց անեղին տեղի
հանգստեան: Որ 'ի կեանս վերածնեալ
բնութեան դարձման մեր յորդանանու օրինա-
կեցեր. և զդրունութիւն մահու և դժոխոց
կործանմամբն երեքօրեայ տապանակաւ խաչին
հրաշագործեալ նոր խորայէլ. օրհնութիւն
քեզ տէր երգեսցեն մանկունք:



Մարդա-

Ամրդավարին ·

կեր Ուրախացիր պսակ կուսութեանց տեմրա-
դկ մայր արփոյր որդւոյն քո · զհայրենեան-
մ նեան վայելչութեան զգլանոս · նմա յամ մմնկէ ժ-
յանձն առնալ զամենայնս մեր ։ Նմա
մավէս և հեզ ըղձմաս սրտանեն յա-
նունն նորա · ցնծան թաբօր եմ-
հեղինն · նմա ։ Նոյաստու զէզ թէ-
թեւ ամմնմկ եւ տեսս · և հայր
յամմայոյն դէր զօրդին իւր դամ
նունեայց · նմա ։

Երկրորդ տուն ·

րկ Դաւուաւդայթ վտանգ հօր որդւոյ միածին ·
տէր որ զլոյս անլայրատեակ մարմնով պարգ-
թդ րևալ · այսօր ի թաբոր վառօք վայելեցեր ։
Որ անուշս սրովբէից անհաս ի վերայն
զևան · ծառայի կերպի պատուածական ըղ-
լոյս անստուեր · այսօր ։ Որ հրեղինացն ան-
մերձենալի հուր ածութեանդ · ի հողեղէնս
խանարհեալ լոյս սրփայլն · այսօր ։

Երրորդ տուն ·

դձ Այսօր որ էն ի յերկինս բան և ծնունդ
տէր հօր միածին · զծածկեալն ի յէից խորհուրդ
թդ յայտնեաց առաքելոցն · ծառայի զկերպա-



րանն

րանն ծածկելով աստուածութեամբն։ Այսօր հըն-
չեաց յառաքեալսն հայրական բարբառ յերկ-
նից. ասէ դա է որդի իմ սիրելի ընդ որ հա-
ճեցայ. որ զբնութիւն աստուածային կերպիւ ծած-
կեալ ծառայական։ Այսօր վերին հաւատոյ
յայտնեալ զխորհուրդ երրորդութեան. եր-
րակի յօրինմամբ տաղաւարացն խորհրդոյ.
որում զմեզ մաքրեսցես լինել տաճար եր-
րորդութեանն։

### Հողակաթին.

դձ Որ հաստատեցեր բանիւ. զեկեղեցի քո
տէր քրիստոս. ի վերայ առաքելական վիմի. երգեմք
թգ ի սմա զերգս հոգեւորս։ Յայտնեալ ի սմա
սեղան սրբութեան. բաշխէ զմարմին իւր և
զարիւն. և տայ ի սմանէ մեզ նորոգումն.
ի թողութիւն մեղաց մերոց։ Իջեալ հոգ-
ւոյն սրբոյ. աղաւնակերպ երևմամբ. ի
վերայ մարմնոյ և արեանն տեառն. ի բը-
ժշկութիւն հոգւոց մերոց։

### Վերափոխման ա՛ծ կէր.

մ Ընթառամ ծա՛՛։ գէշ երէտ. 48։
գկ Աստուածածին ամպ լուսաւոր. որ զցօղն
բշ կենաց հեղեր յերկիր բանաւոր. և զնախա-

եշ մօրն շիջուցեր պարտեային զհուր • անդադար
երկ ձայնիւ զքեզ բարեբանեմք • և հոգեւոր եր-
կիր գով մեծացուցանեմք : Տէր զի անտանելի
բանին • և երկիր փայլեալ է յորում լոյսն
ագանիցն • և արեւելք արեգականն արդարու-
թեան • անդա : Զքեզ կատարումն մար-
գարէից • կուսական քո ծննդեամբ որով
բնութեանս քակեցան օրէնք • Հրաբան
սերոբին փոխադրեալ 'ի լուսաձեւ խորանն •

անդա :

դշ Աստուածածին զերադոյն երկնից ցուցար
մ խորան և առագաստ • բանին ծագեալ լոյսն
գշե 'ի հօրէ • բնութեանց էից անտանելին պա-
ուր
երկ րագրեցաւ 'ի քում յորովայնի • հոգեւոր
բշե երգով զքեզ միշտ մեծացուցանեմք :
Դուռն փակեալ զքեզ եզեկիէլ յառա-
ջագոյն ծանոյց կոյս անարատ • ընդ որ ե-
մուտ անմահն յէից • բանն անմարմին որ
'ի հօրէ և եղ մարմնով անխառն խառնելի մնա-
լով կուսութեանդ • հոգեւոր : Մերախ-
խեալ զքեզ 'ի յերկնային խորանն այսօր որ-
դին քո միածին • ուստի և զօրք առա-
քելոյն • և իմաստունն սուրբ կուսանացն մեծ-
ձայնելով գովէին զքեզ մայր անհասանա-

ցեալ. հոգևոր:

դձ Խորանայրկ կամարանման յօրինեցար սուրբ
մ կոյս ածածին. զանհասանելին զբանն ած.
դհ ընդունողդ անսերմնաբար կրեցեր 'ի քում
շար յորովայնի. անդադար երգով զքեզ միշտ
մեծացուցանեմք: Դուռն երկնից զծագումն
անճառելի անապական որ 'ի հօրէ առաքե-
ցաւ. 'ի գիրկս քո բարձեալ կրեցեր.
զկեցուցանելով մարմնացելոյդ 'ի քէն զկու-
սական քո սուրբ զկաթն. անդա: Տեղա-
փոխեալ զքեզ 'ի վերնական 'ի կառս քե-
րովբէականս աստուածամայր. սպասաւո-
րեալդ 'ի սերովբէից. և երկրպագեալդ յան-
մարմնական զօրաց. անդա:

Յովակիմայ և Աննայի.

դձ Որ 'ի բարձրութեանս երկնից բարձր բանիւք
մեր բարեբանիս սրբուհի. 'ի լիբանանէ դի-
մեալ հարսն զգեցեալ լուսով. զարեգակն ար-
կեալ զքեւ. և ընդ ոտիւք զլուսինն սուսե-
րատեսակ. օրհնութեամբ երգով եկեղեցիք
անեղերաց այսօր տօնեն զյիշատակ ծննդեան
քո 'ի մօրէ: Վեհագոյն սերովբէից և բազ-
մաչեայ քերովբէից թագամայր աստուածա-
ծին.

ծին • տապանակ կտակի սափոր ոսկի խորհր-
դաւոր խորան բանին հօր բարձրելոյ • օրհ-
նութեամբ եր : Արդարէից հանգստարան
և գրաւական կենաց մարդկան միջնորդ ածա-
մայր • ընդունարան եօթնարփեան շնորհացն •
խարիսխ յուսոյ հաստատութեան • զուգա-
թիւ սրբոց դասուցս անճառելոյ • օրհնու-
թեամբ եր :

Նաւակատեաց խաչի •

ակ Սեղան քո տէր զօրութեանց • հաստատեալ կանգ-
ակր նեցաւ 'ի խորանի քում • եկայք ժողովուրդք
թգ երկրպագեսցուք : Սէմ պատուական • 'ի
խորանի քում հիմնեցաւ այսօր եկայք : Դ
ամա մատուցան • Ճշմարիտ պատարագ և զե-
նումն անարատական եկայք :

Խաչվերացի •

գկ Յաղթօղ և զնոր օրհնութիւն միշտ 'ի բար-
ակր ձունս երգեսցուք • Թագաւորին Քրիս-
թգ տոսի հաւատացեալ ժողովուրդք : Որ եկն
'ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի •
և պսակեաց սուրբ խաչին • Նմա զփառս
երգեսցուք : Այսօր և մեք տօնեսցուք զնա-
ւակատիս սուրբ խաչին • և փրկողին մա-
տուցուք • փառք և պատիւ յաւիտեան :



Ի

բշ Ի յերկնից եկեալ նշանն յաղթութեան
գձ այսօր . հեթանոսաց ծագեաց լոյսն որդւ-
տէր մութեան : Եւ բազմութեան ժողովրդեան տե-
թգ սանելին այսօր . սուրբ զխաչն լուսոյ
ձայնածագայթելիք զարդարեալ : Ընդ երկնաւո-
րքն սրբոյ խաչի քո Քրիստոս այսօր ե-
րեւեցեալ մեծապէս պանծացաւ յոյժ :
Եւ զծագումն լուսոյ ի ծոյլն նշանի քո .
ձայնապայծութիւք տեսանելի բազմութեան
ժողովրդեան : Ամենայաղթ զօրութիւն խաչի
քո Քրիստոս . որ ցուցաւ ի յօգնութիւն
ընդդէմ թշնամւոյն . պատերազմեալ զօ-
րութեամբ քո :

տէր թգ Որ հաստատեցեր : 4էր ջրէս. 6Կ.
գշ Այսօր ուրախացեալ ցնծան երկինք բազ-
գձ մութիւնքն . Ի նմանահրաշս սուրբ եկեղե-
տէր ցւոյ . քանզի շնորհեցաւ մեզ քահանայա-
թգ պետ յաւիտենից . Ի լուսաւորել զկաթու-
ղիկէ սուրբ զեկեղեցի . փառք գալստեան
քո տէր : Այսօր սուրբն լուսոյ հաւանի եղե-
ւ մեզ ի բարձանց . քանզի թագաւորն երկ-
նաւոր եկաւորէ ի սուրբ եկեղեցի . և զօ-
րհնեք հրեշտակաց ծառայեալ տանն ընդ-
մարդկան . փառք :



Այսօր

Այսօր քահանայապետք ձեռնարկեալ ի ծայրին օրհնութեանցն պատուեալ. կանգնեն զքահանա-կերպն սեղանոյն խաչին. արժանաւորս պատա-րագեալ բանիւն զմարմին և զարիւնն տեառն. Մաքրանալս մերձեցուցանողք փրկեալք նորոգ ժո-ղովուրդք. և հոյցեցէք ի Քրիստոս զի շնորհեսցէ զսա մեզ ընդ երկայն աւուրս:

եղէ Այսօր ցնծան զուարթք հրեշտակաց ընդ հա-
գձ տատել քո ի յերկիր. ով լուսեղէն
աէր խորան երկնանման եկեղեցի սուրբ. ուրախ
ԲԴ լեր մայր վեհ պատուական հովանի մեր և յոյս: Զուարճացիր հարսն անարատ զքող արկեալ վայելչապէս. զարդարեալ հան-դերձ փառօք և ել ընդ առաջ երկնաւոր փեսային. ուրախ լեր մայր ամուլ բազմածին ահա փեսայն գայ առ քեզ: Աստանօր նո-րոգեցաւ մեզ աւազան մկրտութեան. յոր-դանս մօր հոգւովն յղացեալ. ծնանելով վերստին զհաւատացեալս ի Քրիստոս. ու-րախ լեր մայր անմայր յառաջնումն ահա որդին գայ առ քեզ:

ող Որ զքառաթեւ լուսածին զերապանծ նիշ
գկ կառուցող կենացն ամենից. մեզ շատ բազկա-
աէր տարածն առ քեզ էն: Բաւականս աղանց
ԹԴ



հովանի

հովանի և պահապան 'ի յելս և 'ի մուտս. փրկութիւն 'ի յայսոց և 'ի պարտեաց ամբա-թեան : Գործոյ զգայութեան և կենացս 'ի դէմս ամենեցուն . զոր և յանձնայինս կատարեա խորհուրդ . յորմէ աներևակայելին մայլեն

Հաւատայթք :

շար Սուրբ զխաչ քո շնորհեա մեզ զէն եկեղեցւոյ
գկ քում սրբոյ . որով դատապարտեալ պարտե-
տէր ցաւ Բելիար : Սովաւ պահպանեա զժողո-
թվ վուրդս քո Քրիստոս . որով երկրպա-
գեմք քեզ ընդ Հօր և Հոգւոյդ : Դու քեզ պաշտելիմք Քրիստոս . որ գալոցդ ես խա-չիւ . որպէս զի մերկեսցես զմեզ յայնժամ աւուր ահեղ ատենին .

Սարագայ խաչին .

գձ Քեզ Քրիստոսի կաթողիկէ եկեղեցւոյ
տէր շնորհօղի . զյաղթական զպատուական զնշան
թգ ընկալեալ սուրբ նշանս . մատուցանեմք զշնորհե-
րութիւն միշտ 'ի բարձունս : Սակաւ քո Քրիստոս և թևօք ամենազօր սուրբ Հոգ-ւոյն . և դասուք հրեշտակաց թռուցեալ ե-կաւորի . 'ի լեառն վարագայ ընակել 'ի նմա: Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ա-ծա-



յին

յին սուրբ Նշանիս · համբարձէք միաբան ըղ-
ձեռս ձեր ՚ի սրբութիւն · և զընծայեալն ՚ի
սմա միշտ փառաւորեսցուք ։

Գովեստ խաչին ·

բձ Այսօր խնդրի պատուական փայտ խաչին ա-
տէր ւանդեալն ՚ի գողգոթա · ՚ի ձեռն ածասէր
ԽԳ դշխոյին · եկայք հաւատացեալք · երկրպա-
գեսցուք ածային սուրբ նշանին ։ Այսօր ըն-
ծայէ գողգոթա զծածկեալն ՚ի յերկրի · վե-
րաբերեալ անուշահոտ խնկովք · ՚ի ձեռն
երանելոյն յուդայի · եկայք ։ Այսօր ՚ի
ձեռն փրկական սուրբ խաչին կենդանագործի պա-
տանին մեռեալ · և ողբայ սատանայ զկոր-
ծանումն իւր · իսկ մեք Քրիստոսի հաւա-
տացեալք · երկիր ։

Հրեշտակապետաց ·

գկ Այսօր ուրախացեալ սուրբ եկեղեցի քո ·
օրր տօնէ խնդութեամբ զօրն վերինն երկնայի-
մի · սրբասացն ձայնիւ փառաւորեն զքեզ ։
Այսօր համաձայնեալ որդիք սիոնի երկ-
րային · տօնեն զուարճանան ընդ ուոց անդ-
րանկաց վերին սիոնի · որ ։ Այսօր դասք
անմարմնոցն երգս առնել պարեն ընդ մարդ-

 կան ·

կան. զերգս հոգևորս յանման փեսային
յաւուրս սո. սր :

Յովհաննու Մկրտչին.

դկ Այսօր ցնծայ եկեղեցի 'ի հոգևոր հարսա-
ոհր նիս. որ պատրաստեաց Հայրն բարերարն յ.
հարսն մաքուր փեսային : Այսօր փեսաւէրն
և բարեկամն ընդ երկնաւոր փեսային. մեա-
ւորեաց զեկեղեցի. մխիթարելով 'ի յեր-
կինս : Այսօր շնորհեցաւ մեզ դեղ կենաց
նշխարք սրբին ոսկերաց. 'ի ձեռն սուրբ լու-
սաւորչին հայաստանեայց աշխարհի :

Երկոտասան առաքելոց.

ակ 'Ի յանսահմանն ծովէն հօր գթութեց բղխմունք
ոհր և սուրբ առաքեալք. անդրանիկ խորհուրդք
և լոյս գերագունից. երկոտասան աղբերց սր-
բեալ սուրբ եկեղեցւոյ. բարեխօս լերուք մե-
զէր վասն անձանց մերոց : Աշխարհականի
բանին բանկաց եղեալ հիմունք սրբոյն սի-
ոնի. լերինք անշարժք հովիւք ծաղկածինք.
հարազատ վէմք հաւատոյ պետրոսի և անդ-
րէաս. բարձ : 'Ի բարեբուն հովուոյն վտակք
և որոտմունք տեառն եզերաց. ցոլմունք հրեղէնք



սատ-

մտանեղք լո՛ւսափայլք · մի՛ թագաւորին վա՛-
կաս լանջա՛ց սուրբ յովհաննէ՛ս և յա՛կոբո-
բա՛րի ։ Հայրապետունք այգւո՛յն հրեղէն պա-
րի՛սպք և բարձր աշտա՛րակ · ոսկեղէ՛ն բա՛-
ժակք և ծի՛ր մանուածի · հայաստանեա՛յց
հայր հօգևո՛ր բարդուղիմէո՛ս և թադէո՛ս ·
բարի՛ ։ Քրիստոսակա՛ն հօտին անմահ արօ՛տ
և ջուրք հանգստեան · հսկօ՛ղ հովի՛ւ խաւա-
րահալած · բանաւոր փարոսն սուրբ թովմա՛ս
և փի՛լիպպոս · բարի՛ ։ Ի՛ մաքրագո՛րծ հոգ-
ւոյն անօթ ընտրեա՛լ և ձի՛ւնափայլ · թա՛-
դէոսք երկի՛ն երկնայինք ա՛շխարհի · անպա՛րտկա՛ն
գանձուց բաշխօղ յա՛կոբ ալփեա՛ն յո՛ւդա յա՛-
կոբեան · բարի՛ ։ Ս՛րբազրեա՛ն մի ա՛կ՛րու-
թեան՝ խորհուրդ կամա՛ց և հա՛ղորդակեալք ·
փո՛ղոց հնչմա՛նք բա՛րբառք ա՛ւետեաց · ընդ
ա՛մենայն երկի՛ր սուրբ շմաւո՛ն և մատա՛թի՛ա ·
բա՛րէխօս ։ Բա՛նին կե՛նաց կանաւո քարո՛ղ և
աւետա՛րանիչ · երգ փրկութեան՛ հնչմա՛ն ա՛-
հա՛ւոր · ազգի մա՛րդկան պարծանք սուրբ
մա՛տթէոս · բարեխօս լե՛ր առ Քրի՛ս՛ վասն ·
Ս՛նձաւեկք դրախտի՛ն մտա՛ւն ա՛եսող և ե՛ր-
րո՛րդ երկնի՛ց · նկարօ՛ղ բարձա՛նց խորո՛ց բա՛-
նա՛լի · երեքտասան սուրբ առաքեալ պօ՛ղո՛ս



հայր

հա՛յր համա՛տարած ․ բարեխօ՛ս լե՛ր մե՛ր առ տէ՛ր
վասն ։

Առաքելոց ․

ակ Ո՛ր սիրօ՛ղք էք արարչի՛ն արա՛րածոց Քրիս-
սեր տոսի սո՛ւրբ առաքեա՛լք ․ բարեխօ՛ս եղէ՛ք առ տէր վա՛սն մե՛ր ։ Ո՛ր քարո՛զք էք ընդհանո՛ւր տիեզերա՛ց ․ Քրիստոսի սուրբ ա՛ռա՛ ։ Ո՛ր պսա՛կք էք ամենայն եկեղեցեա՛ց ․ Քրիստոսի սո՛ւրբ ա՛ռա՛ ։

Առաքելոց ․

ակ Ա՛շակե՛րտք Քրիստոսի ․ և՛ առ ամենայն
սեր տիեզերս առաքեալք ․ բարեխօ՛ս եղէ՛ք առ տէր վա՛սն մե՛ր ։ Ո՛րք առի՛ք զպատուէ՛ր ․ քարո-զե՛լ անընկլուզ զբա՛նն կենա՛ց յա՛շխարհի՛ բո-լո՛ր ։ Ո՛րք արժանի՛ ե՛ղէ՛ք տեսանե՛լ մարմնով զորդի՛ն Աստուծոյ յայտնապէ՛ս ․ բա՛րե ։

Դաւթի և Յակոբայ ․

գձ Ա՛նսկիզբն Աստուած լո՛յս ՚ի լուսո՛յ ․ որ ծա-
սեր գեցա՛ր մեզ ե՛ղջիւր փրկութեան ՚ի տանէ դա-ւթի ․ ա՛ղօ՛թիւք սոցա՛ Աստուա՛ծ ո՛ղորմեա՛ մե՛զ ։ Ա՛նմարմնոց վերնո՛ց Թագաւոր յա՛ւի-տենի՛ց ․ որ մարմնով երևեցա՛ր յերկրի ՚ի զա՛ւակէ դաւթի ․ ա՛ղօ ։ Յա՛ւա՛յնու՛մ ա՛ծա-

հայր անուանեցաւ մարգարէն դաւիթ . և ՚ի
վերջինս եղբայր տեառն կոչեցաւ սքանչելին
յակոբ . ալէ :

Ստեփաննոսի .

դկ
սիր
Ցնծայ այսօր եկեղեցի Աստուծոյ . զքո վա-
յելչապէս տօնէ զյիշատակս . ո՜վ սուրբ
ստեփաննոս . մեծ և պատուական անուանդ
՚ի վկայս . ալէ : Նախաշաւիղ բարեաց ա-
մենայն արշաւեր . և լուսաւոր ճանապար-
հացն եղեր ժառանգորդ . ո՜վ սուրբ ստե-
փաննոս . մեծ : Աստուածային զինու վառե-
ցար սուրբ հոգւովն . տեսանելով յերկինս
հայրենի փառօք զորդին այ . ո՜վ սուրբ
ստեփաննոս մեծ :

Պետրոսի և պօղոսի :

դձ
սիր
Ամոլք հաւատոյ . այսօր մայրն հայր սուրբ
՚ի քո սուրբ եկեղեցւոյ . մարդասէր փրկիչ
տօնողացս ողորմեա : Բարեխօսութբ պետ-
րոսի և պօղոսի քո սուրբ առաքելոցն . մար-
դա՛ : Լուսաւորեալք ՚ի սոցա դպրութենէս
փառաւորեմք զսուրբ երրորդութիւնդ . եր-
կրպագանելոյն աղօթիւք տօնողացս տէր :

Որդւոյն որոտման :

դկ
սիր
Որդիքն որոտման . որք ՚ի վերուստ հնչեցին


զքանդ

զբանն կենաց ծագեալ 'ի հօրէ. և զանեղն զերա

հրաւիրեցին յօրհնաբանութիւն սուրբ երրոր-

դութեանն. բարեխօսութեամբ սոցա մեզ ողոր-

մեա մեզ որդի ա՛յ. Բանն մարմնացեալ 'ի

կուսէն քարոզքն տեսին սուրբ առաքեալքն

յաշխարհին զլուսաւոր միածնին. բարձր:

Զչարչարանս և զմահ ընդ մեզ յանձն առ-

եալ. համբարձեալ փառօք քոյ աջմէ 'ի քում

գալստեանն. բարձր:

Սորդորեց.

ա՛ծ / սիր Պատուաւորեալ անձառ լուսոյ աշակերտք տէրու-

թեան. յառաջնոյն դոյն հրաշալիս ցեր զտեսա-

ղութեան մարգարէիցն. 'ի չանեցու 'ի տու-

րենս ա՛ծային անօրէնութեամբ: Որք զառ-

ձեր հաւատոյ հիմնեցուցին շնորհօք սուրբ

հոգւոյն. յոր եմուտ բանն ա՛ծ եօթնար-

փեան ձառայութեամբ. 'ի չեա: Եւ երեւեցաւ

յաշխարհի ճշմարիտ մարդկութեամբ. զոր

քարոզեցին մեզ հրաւիրօքն համագոյ հօր

և հոգւոյն. լուսաւորեալ զանեղին ա՛ծային

անօրէնութեամբ:

Սորդորեց:

դ՛ / սիր Որ աւետաւոր քում զմնորեանով տարբեր

յաշխարհ զուրբ մարդանէն. և եկեալ



խոնար-

խոնարհութեամբ նոր օրհնօք զՏէրն լցէր
'ի դիմս օրհնաց և մարգարէից · բանն խոստու-
թեամբ տուաւ քո որ լինիմ մեզ ։ Որ կո-
չեցեր մարգարէիւք յառաջագոյն զհեթանոս
քեզ նոր ժողովուրդ · և զդուստր սիոնի
զեկեղեցի հեթանոսաց հարսն սիրելի ան-
մահ փեսային · բանն ։ Որ զխաչս տնօրինս
զոր ընկալեր ըստ ոչ էից 'ի մերոյս մի մին·
տարածեալ բանն … · և գերեզման
փայլեցուցեր … 'ի մա-
նկանց հոգւոյն · բանն ։

Հ. պրպտեաց ·

Գ ձայն Ս. յօր և օրհնեալ ես ընդ մեզ · առաքեալ-
եալ դէպ շարակ սուրբ մարգարէիւքս · որք
… զհաւատ … · և …
հրեշտակս ես դու … ։
Ս. յօր առաքելոց և մարգարէից ես դու · առ-
նակիցս … · 'ի յե-
շտակի սուրբ մարգարէիւք … · որք զե-
… յայտնեցին զ… ։
Ս. յօր քահանայք և պաշտօնեայք սուրբ ե-
կեղեցւոյ · … դէպ շարակ սուրբ
մարգարէից … · որ … եր-
նային … · … ընդ նոսին զ…-

ուրս յաւիտեան ։

Հայրապետաց .

գձ Զառաջնորդս և զկարգաւորեալս եկեղեցւո՛յ
ոխր քում տէր . յիշատակաւ պատուեմք այսօր .
բարեխօսութեամբ սոցա` ք̃ս խնայեա ՚ի մեզ ։
Ձէր մշակք անդա` ըստ էլի կաթողիկէ եկեղե-
ցւո՛յ . և պսա՛կ պարծանաց հաւատացելո՛ց .
բարին ։ Հայրապետք ա̃ծային խորհրդո՛յն .
և բաշխօղք դրան արքայութեան երկնի՛ց .
բարեխօսեցէք առ տէ՛ր վասն անձանց մերոց ։

Մուտն ՚ի վերայն .

դկ Երկինք ամենայն այսօր ցնծացէք ընդ մեծա-
ոխր պայծառ վառան սեպուհւոյ գերազանց լե-
րինն . քանզի ՚ի նմա բնակեցաւ սուրբն գրի-
գորիոս ո՛ւն լուսոյ հայաստանեայց սուրբ ե-
կեղեցւո՛յ . որով ցնծան ՚ի վանս վերնո՛յն
սիոնի ։ Որ առաւել խորին խորհրդով խըն-
դայ քան զարարատեանն բարձր մասիս . քան-
զի ՚ի նմա հանգեաւ սուրբն գրիգորիոս տապանն
աղբեցուցէ ՚ի հասանոց մեզ հայաստան
ազանց . որո՛վ փրկիմք միշտ ՚ի չարց հոգա-
նոց ։ Գերապայծառ լուսով բերկրեալ զուար-
ճանայ լեառն սեպուհւոյ հանդոյն սիոնայի .
յորում եկաց կանոնն ամպ եղէն սուրբն գրի-



գորիոս

գորխս · պերճաշքեղ լուսով զարդարեալ նման
մանկանց · որով փայլեն երեք շնորհօք սուրբ
հոգւոյն ։ Օրօք հրեղինաց պատրաստեալ պա-
հի՛ լեառն հանգստեան սրբոյն դրախտին տես-
լեամբ կարմրեղայ · զորս պարսպէն կնտքն կեն-
դանի՝ մաքրախոյլ աղօթք սուրբ լուսաւորչին
հօ՛րն հոգևոր · զոր ան տէր ունիմք միշտ բա-
րեխօս ։ Համանմանեա՛լ անմահածնին եա-
յեայ կայծակնա մաքուր սուրբ մարգարէ՛ին
տէր գրիգորիս · վեցթեւեան սրովբէից կինք չ
կենդանեաց եղե տեսանող հոգւով կենդա-
նի՛ն · զանդնդախոր գծին երկնից կամար յօ-
րինեա՛ց ։ Շնորհա՛ բաշխ աջովն յիսուսի պա-
տուեցաւ լեառն սեպուհ՛ի՛ 'ի անտ սա՛նիրա՛յ
և՛ ահերմին՛ի · յորմէ՛ բղխեա՛ց աղբի՛ւրն լու-
սոյ ջուրս բարեհամս և՛ փառս յորդա՛ խաղաց
հասանօք · որով ցնծայ եկեղեցի 'ի բերս ամե-
նեայ ։ Ծննդեամբ սուրբ կուսի՛ն յայն
բեթղեհէմ յորդորեցան զատերքն եւ այլ վինել
կուսա՛ւթեամբ 'ի մայր քրիստոսի՝ · յորում
ծագեաց խորհուրդն պայծառ յերկնանման լե-
րինն 'ի յայրն մա՛նեա՛յ մաքրական փառօ՛ւք ·
որով սրբեմք միշտ 'ի յաղօթս մեղաց ։ Խոր-
հուրդ խաչելո՛յն դրահրաշ անդուո՛յն գո՛ղգո-



թայ

Թո՛յ ծածկեալս 'ի սի՛ն լերին սեանի ·
զէ՛ն արքայական այամանա՛նն գործի՛ կենա՛ց
արքայի՛ն 'ի կենա՛ց գո՛րծիս նուիրեալ · ո՛րով
մերկեալք զմե՛զ յանի՛մանելից մահուանէ՛ ։

Ո՛ խորհուրդ սեպուհո՛յ · սեպհական մարտից
հո՛գւոյն սրբո՛վ մարգա՛րէին ծանուցեա՛լ ·
մի և հարցանէր զխարա՛նն ո՛յ և զե՛ա՛ն ո՛ն
թէ ո՛վ ընծայեցէ՛ · զո՛ր և՛ ասէ՛ սա սուրբն
գրեա՛լ կա՛տարեա՛լ ։ Սրբին մարտք ա՛րդարն
հոգւո՛վ բանիւ Ճշմարիտ և սուրբն սրտիւ տէր
գրեալոյս · որում ցանկացան զօ՛րքն սրովբէից
քերովբէք հրեղէնք յերկնից յերկիր խոնար-
հեա՛լ 'ի մե՛ս մարմնով Ճգնողի՛ն · ուր և պա՛-
տիւ տեսողոյն անուամբն կոչի՛ ։ Զուալին հրա-
կոչէ՛ Ճշմարիտ և քա՛ջ հովուին պատկերի հո-
վի՛ ւքն եղեն հետևո՛ղք · զոր ամփոփեցին ըղ-
մա՛րմինն մաքուր մի՛րձ 'ի յայրն մանեա՛յ մեզ
զե՛զ ա՛խտից մաքրութեան · որով սրբիմք
հո՛գւով 'ի թունի՛ց վի՛շապին ։

Սուրբ Լուսաւորչին ·

գ կ Զօ՛վլէ՛ս · քա՛ջ բանա՛ւոր հօտի տէ՛ր սուրբ գը-
ուր րիգոր · հաստատեցեր զհիմունս եկեղեցւոյ 'ի
հայաստան երկրի · 'ի վերայ հիմա՛ն սուրբ

առաքելոյն ։ Հովիւ բանին և առաջնորդ կենացն յաւիտենից տէր սուրբ Գրիգոր ․ հաստատեա զանձինս մեր հաստատեալ ճշմարտութեամբն ․ ի վերայ հիման սուրբ եկեղեցւոյ ։ Արդ աղաչեմք զքեզ հայր փառաւորեալ և տէր բարեխօսեա Քրիստոսի աստուծոյ մերոյ կեցուցանել զանձինս մեր ։

Յակոբայ Մծբնայ Հայրապետին ․

դկ Որ յանապատէ կոչեցար յառաքելական յա-
ողբ թոռ բանին սուրբ յակոբ ․ բազմացուցեր զեկեղեցի սուրբ ճշմարտութեամբ միասմբ նոյեան տապանին ։ Որ արդարութեամբ և լուսով քո փայլման նոր արեգական ․ պայծառ քան զարփին վառեալ զօրութեամբ ․ յաւնել ի հրաշս պատմութեան ։ Որ միացեր սրբութեամբ ի լոյս մաքուր որպէս զանմարմին ․ զարմացուցեր զզօրս վերինս հիացուցեր զարարածս ։ Արդ աղաչեմք զքեզ հայրդ գթած և հովիւ բարի ․ մաղթանօք հայցեա առ տէր վասն եկեղեցւոյ ․ միշտ անշարժ պահել յաւիտեան ։

Օրհ. մանկանց ։

դձ Որ զշնորհս անծայրին առ ի վերուստ ընկալեալ
ողբ Ք.


յերկնից

յերկնից պարգեւեցեր հրեշտականացս 'ի ձեռն
սուրբ վարդապետին · աղաչանօք սորա ողոր-
մեա մեզ աստուած ։ Որ զանմարմինն պարա-
նակող բանի զգրաւորական զիմաստ հոգւոյն ·
շնորհեցեր որդւոց Թորգոմայ · յայտնեալ
տեսլեամբ 'ի ձեռն սուրբ վարդա ։ Որ զգե-
տութեան քո զերկնային եւ զհոգեւոր զիմաս-
տութիւն · անապական ծաղկեցեր յեկե-
ղեցիս հայաստանեայց 'ի ձեռն որդւոց Թարգ-
մանչացն · աղա ։

Ներբողեան ·

գկ Այսօր ցնծայ եկեղեցի է̃ անմարմնոցն դա-
օրր սակցեալ · տօնելով զայն շառաւիղ քո տէր
սուրբ ներբողես · որ 'ի հոգւոյն սրբոյ աղաւնա-
կերպ իջմամբ վկայեցար · բարեխօսեա առ
Քրիստոս վասն անձանց մերոց ։ Քահանա-
յապետ ընտրեալ արժանապէս շնորհօք հոգ-
ւոյն բաշխեցեր զերկնային մարմինն եւ զա-
րիւնն տեառն · յորում հրեղէն սիւն 'ի յերկ-
նից իջեալ · բարեբ ։ Որդ աղաչեմք զքեզ լու-
սաւորիչ հոգւոց մերոց նմանեալ մովսէսի
նախամարգարէին մեծի · լուսաւորեալ դիմօք
ա̃ծահրաշ տեսլեամբ · բարեբ ։



Գրիգո-

Գրիգորի աստուածաբանին ։

բձ ձեր Որ լուսով անծայրին բանին զարդարեցեր զե-
կեղեցի · և զխաւարն անգիտութեան հալա-
ծեցեր յազգաց մարդկան · ով տէր սուրբ Գրի-
գոր · բարեխօս լեր վասն մեր առ միածին
բանն հօր ։ Որ զհամագոյ բնութիւն միաս-
նական երրորդութեանն · յայտնեցեր եկեղե-
ցւոյ խոստովանել միութիւն · ով տէր · Որ
զերկնական տնօրէնութիւն մարդացելոյն վասն
մեր · ուսուցեր մեզ յերկուց նոր խառնուածս
սքանչելի · ով տէր ։

Պենդեանց ·

գձ ձեր Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք · լու-
սաւորչօք կենդանեօք · որք ի գործոց իւ-
րեանց ծառայեցին զլոյսն անստուեր · հա-
յելի աշխարհաց զտէր ողորմաց ։ Բաղձանօք
պատուեալք ծնմամբ սուրբ հոգւոյն · նա-
խակարգեալք յառաջնորդութիւն · վախ-
գաղաց վերինոյ յարկին և անսպառուածն պա-
րաստեալ բարեացն · այսօր վարձուցն ե-
լանել ի նոյն ։ Զուարթնոց երկնից եղե-
ցին նմանութիւն · տեսանելով զհրեղէն զարդա-
րելն կոչեցեալ յուրախութիւն անծայրին և



լուսա-

լուսաւո՛ր սուրբ անապատին. պատրաս-
տեալ նոյա զյաղթանակ մարտին: Ամ-
բարշտաց եւ անօրինաց մատուցան ձեռօք.
նուիրական պատարագ ընծայից. Թագաւո-
րին երկնաւորի որ հրաւիրեաց արեամբն իւ-
րով լինել կցորդ խաչին սեղանոյ. կա-
մակար մտօք զինքեան սիրողաց: Հաշտա-
րար ընծայ հօր ազգի մարդկան. Քրիս-
տոս ա̃ծ. զեկեղեցի քո հաստատեա խնդրուա-
ծովք նահատակաց ի քէն ընտրելոց. բա-
րերար փրկիչ միայն մարդասէր: Որ խոս-
տացար լինել ընդ մեզ մինչ ի կատարած.
անանջրպետ աղ ի քէն փարատողաց. եւ այ-
ցելու մեղաւորաց որսացելոց ի բանսարկուէն
ի խաւարային նորա կամս. քաղցրութեամբ
քո այցէր խնայեա ի մեզ: Հեղմամբ ա-
րեան սրբոց քոց հօտապետաց. զեկեղե-
ցւոյ քո ցրուեալ մանկունս ժողովեա յու-
րախութիւն զխորանեալս որդութեամբ. եւ
արտասուաց յորդահոս բղխմամբ. փրկու-
թեան մերոյ պարգեւաց բաշխօղ: Աղ-
թանօք սոցա զթասցիս ի մեզ. անխնա-
կալ եւ ամենառատ. որ ընտրեցեր ի մարդ-
կանէ չարչարանաց քոց պտղակիրս եւ գերա-



ղանց

զանց բարեաց ժառանգորդս. օրհնութիւն
քեզ ամէր երգեսցեն մանկունք:

Սարդանանց:

դկ Արեգակն արդարութեան ՚ի հայաստան ծա-
սկբ գեաց. պայծառացուցեր սուրբ զեկեղեցի
հեղմամբ արեան սրբոյն. մաղթանօք նոցա
խնայեա ՚ի մեզ պարգեւատու բարեաց.
եւ ողորմեա քո արարածոց: Պանծալի
սուրբ զաւակօք հոմերքն զուարթունք. հրով
հոգւոյն շիջուցին զրոյն զկրակապաշտ պար-
սիցն. մեզ: Պարթեւական տեառնագին յա-
ռաջադոյն աղերսութեամբ. զհաւատոյ որ-
դիս սրբոյն գրիգորի պահպանեա տեսեալ.
մեզ:

Մնանի:

աձ Որ անմարմնական վարուք պայծառացեալ
սկբ ՚ի մարմնի զօրացեալ տերամբ. ով ոէ հայր
անտոնիոս. եղեր օրինակ բազմաց եղեր դու-
ռըն մտից կենաց ճանապարհին. յիշեսցի՛ր
զմեզ առաջի Քրիստոսի. քո սուրբ եւ ար-
ժան ընդունակ աղօթիւք: Որ առեր զմեծ
խոնարհութեան համբերող խոտհամբերու-
թեամբ. եւ պարակցեալ օրհնութեամբ ընդ
հրեշտակս. եւ խաչակրօն անդադար սաղմոս-



երգու-

երդութեամբ՝ · յիշես ։ Սանորդ և՛ մե՛ք այսօր տօնեմք զհանգստեա՛ն օր յիշատակի քո · անմոռացաց յիշմա՛մբ հայցեսցես ՚ի Քրիստոսէ զմեծ զողորմութիւն՝ · քո՛ սուրբ ։

Հռիփսիմեանց ·

դկ ակր Քրիստոս ա՛ծ բացեր զդո՛ւռն հաւատոյ սրբո՛յն հռիփսիմեա՛յ · խոստովանե՛լ զա՛ծութիւնդ քո մարտիրոսութեամբ ՚ի մէջ հա՛յաստանեա՛յց ։ Յաղթօղ զօրութե՛ պայծառացեա՛լ ՚ի կամարս լուսեղէ՛նս · ընդ ա՛նմարմնոց բազմութիւնս՝ · խոստովանելով զքո՛ Թագաւո՛րն ։ Ժողովեա՛լքս հա՛յցեմք · բարեխօսութեամբ սրբոց հռիփսիմեա՛նց · ընկալ և՛ զմեզ փրկիչ յորդեգրութիւն ՚ի դպրութեան կենաց ։

Թագաւորաց ։

բձ ակր Աստուած փրկիչ մե՛ր · լո՛ւր մեզ ո՛ր կարդամք առ քե՛զ · բարեխօսո՛ւթեամբ սո՛ւրբ Թագաւորի՛ն ։ Որ բա՛րեպաշտութեամբ հիմնեցո՛յց զեկեղեցի՛ սուրբ · և՛ կարդաւորեաց ուղղափառութեամբ զքո՛ ժողովուրդս ։ Առանկեալ աղաչեմք զքեզ մարդասէր տէր · յիշատակի սորա՛ պա՛րգևեա՛ մեզ · զերկնային քո՛ զխաղաղութիւնդ ։



Դուն-

Ղունկիանոսի հարիւրապետին ․

գձ Յովսէ՛փ ճշմարիտ և արդար ․ հայցէր ’ի
ձեր պիղատոսէ՝ զդատապարտեալ զպարգևատուն ․ որ
տուաւ մե՛զ զանձ անկողոպտելի ։ Պատեալ
սուրբ կտաւովք զմարմինն տէրունական զա՛ր-
կո՛ղն զլոյս ո՛րպէս զօթոց ․ որ զդեցո՛յց մե՛զ
զդեղս անկողոպտելի ։ Եդա՛ւ ’ի նորափոր
’ի վիմի և՝ մատանեաւ կնքեցաւ ․ ո՛ր զնախա-
ստեղծն կենդանացոյց ․ և մա՛րդկան կա՛պանս
մահու եղծ ։

Մանկանց բեթղեհեմի ․

գձ Ա՛յսօր տղա՛յք անմեղա՛յք կոտո՛րեալք ’ի հե-
ձեր րովդէ՛այ ․ եղե՛ն ճշմարիտ վկա՛յք ծննդեա՛ն
քո տէ՛ր ․ բարեխօսութեամբ սոցա՝ փրկեա՛ զ
ո՛գի՛ս մե՛ր ։ Ա՛յսօր կատարեցաւ բան մարգա՛-
րէին որ ա՛սէր ․ ձայն գո՛ւժեա՛ց ’ի՛ հռամայ
լալո՛ւմն ․ ողբումն և աշխարումն բա՛զում ։
Նահատակեցա՛ւ բե՛թղեհեմ հեղմա՛մբ արեան մա-
տղայոցն ․ բե՛րկրեցաւ և՛ հռաչէր անո՛ւշահոտ
պատարա՛գօ՛ք ․ բարեխօս։

Ստեփաննոսի սիւնեցւոյն ։

դկ Մա՛րտիրո՛ս և վկայ Քրիստոսի՝ սուրբ ստե-
ձեր փաննո՛ս ․ որ զչարչարա՛նս յա՛նձն առե՛ր ․ և


չիա

երկնայի՜ն դասուցն եղեր դասակից . աղա-
չեա՛ զա՛ծ շնորհել մեզ զկեանս անվախճանս:
Ո՛րս անուա՛ն քո եղեր պսակ եկեղեցւո՛յ .
և՛ հետեւօղ լուսաղորդ ճանա՛պարհի՛ն . և՛
յորդորի՜չ դասու ընտրելոցն ընդ քե՛զ սր-
բոց . ա՛ղա : Ցնծութիւն եկեղեցւոյ ընտրե-
ցա՛ր 'ի հոգւո՛յն . և՛ լուսաւորեցեր զո՛րդիս
Թորգոմա՛յ . ա՛յսօր բերկրի՜ն հաւատացեալք .
և՛ տօնեն զճգնութեա՛ն քո զհանդէս . աղա:

Սարգսի զօրավարին :

աձ Օ՛րհնաւորն Քրիստոսի՛ 'ի հօ՛րէ՛ առեալ
ոխր պա՛րգևս . յա՛ծատա՛ւնկ 'ի՛ դրախտէ՛ն ծա՛-
գեցաւ մեզ շառաւիղ . որ է զէ՛ն յաւուր վա-
հա՛ն հա՛ւատոյ : Ի՛սկ երանելի՛ վկայն Քրիս-
տոսի զօրանայր 'ի սուրբ հոգւո՛յն . զի՛ զերա-
նութեա՛նսն ա՛ւնէր զշնորհս ողորմութեա՛ն .
որ է զէ՛ն : Ե՛կս տարաջէ՛ք զյիշատակ սրբոյն
սարգսի զօրավա՜րին . որ է զա՛ւուն ե՛րկնից և՛
ճանապարհ արքայութեա՛ն . և՛ մեզ զէ՛ն :

—

Մարտիրոսաց ըստ ութն ձայնից :

աձ Պա՛րծեցեալն սուրբքն փառօք . և՛ ցնծացեալն
ոխր յաւիտենական 'ի վաստակս իւրեանց յաւուր



դա-

զալստեան փրկչին · յորժամ գայ փառօք հօր
փառաւոր լինել 'ի մէջ սրբոց իւրոց : Սիրէ
տէր զերկիւղածս իւր և պահէ զնոսա · և
բնակէ 'ի հեզս և 'ի խոնարհս 'ի գալստեանն
իւրոյ · յոր : Փոխանակ ճգնութեան համբե-
րողաց · մատուցանէ իւրաքանչիւր զանթա-
ռամ պսակ · փայլեն որպէս զարեգակն · յոր :
ակ 'Ի տաճարի հանդստեան սրբոց վկայից · զա-
ձյր ղաչանս մեր մի անտես առներ որ կարդամք
առ քեզ տէր · սոցա բարեխօսութեամբ կե-
ցո զմեզ : Որք վասն անուանդ քո հեղին ըզ-
պատուական սուրբ զարիւնս իւրեանց · արիա-
բար մարտեան ընդդէմ թշնամւոյն և զօրա-
ցան 'ի պատերազմի · սոցա : Պարծեցին
սուրբք քո տէր 'ի հանդիսս իւրեանց · որք
տանջանաց անօրինացն համբերեցին · և անա-
պական պսակացն արժանի եղեն · սոցա :
բձ Ուրախանան հրեշտակք 'ի յերկինս · ընդ
ձյր չարչարանս ճգնաւորացն · և հրաշանան արա-
րածք ընդ յաղթութիւնս սրբոցն : Նե-
ծաղէս պատերազմեալք · զանօրէնութեան
զհանդէս · պսակեցան 'ի քէն ընդ վե-
րին զուարթունս : Ցնծայ կաթուղիկէ ·
զուարճանան հաւատացեալք · անպարտելին ա-



սերով

սերովդ․ վառեալք քեզ ամէն։

բկ Յիշեա զմեզ ած փրկիչ մեր․ յորժամ գաս
ձեր թագաւորութեամբդ քո՝ կեցո զմեզ․ բարե-
խօսութեամբ սրբոց քոց։ Շնորհեա մեզ
թողութիւն երկնաւոր թագաւոր․ ընկալ զա-
ղաչանս մեր կեցո զմեզ․ բարեր։ Յօրհնու-
թիւն ՚ի նոր օրհնեցուք զքեզ Քրիստոս
թագաւոր․ որ վասն մեր մարմնացար կեցո
զմեզ․ բարեր։ Օ հայր և զորդի և զսուրբ ըն-
հոգին․ փառաւորեմք ասելով․ երեքսրբեան
տէրութիւն կեցո զմեզ․ բարեր։

գճ Պայծառացիր եկեղեցի այ․ ընդ ծննութիւն
ձեր սրբոց վկայիցն․ որք նահատակեցան ՚ի յերկ-
րի․ և ՚ի յերկինս պսակեցան։ Ուրախա-
նամ և հրեշտակք ՚ի յերկինս․ ընդ ծննդու-
թիւն սր։ Համանմանեալ ընդ նոսին այ-
սօր և մեք տօնեմք զյիշատակ սր։

գկ Ոգնաւորք ճշմարիտք և վկայք Քրիստոսի․
ձեր որք զչարչարանս և զմահ յանձն առին վասն
անուան․ զձեզ ունիմք բարեխօս առ Քրիս-
տոս վասն անձանց մերոց։ Քանզի հեղմամբ
արեան ձերոյ պայծառացան սուրբ եկեղեցիք․
և զստուերամած խաւար կռապաշտութեանն
բարձիք․ զձեզ։ Երկնային զօրքն խնդան



՚ի պա-

՚ի պատիւ պատարագի՛ մահուան ձե՟րոյ. և
զպսակս անապականն առ ընդունելով ՚ի հօրէ
լո՟ւսոյ. զձեզ:

դձ ահր Ողորմութիւնք սրտից քոց Քրիստոս՝ հաս-
տատեցի՟ն զհիմունս սուրբ եկեղեցւոյ. կանգ-
նելով ՚ի սեմ գիշա՛ն յաղթութեան: Եւ
հեղմամբ սուրբ արեանն խաչելոյ. ազատե-
ցին զանկեալս ՚ի դիցապաշտ մոլորութեանն.
և՛ եղե՛ն յաղթօղք ՚ի պատերազմի: Ընդ որս
և՝ մեք ապաշխարեմք Քրիստոս ընկալ և՝ զմեզ
յերկնային խորանն ՚ի լուսեղէն առագաստն.
բարեխօսութեամբ և աղօթիւք սուրբ ճգնա-
ւորացն:

դկ ահր Այսօր եկեղեցի՛ Քրիստոսի պայծառանայ
յիշատակաւ սրբոց վկայիցն. որ բարեխօսեն
առ Տէր վասն մեր: Այսօր ՚ի հեղումն ա-
րեանն նոցա պա՟ռք հրեշտակաց խնդակցեալ.
միաբանութեամբ ասեն ընդ մարդկան:
Եկայք և՛ մեք Քրիստոսի հաւատացեալքս.
կա՛տարեսցուք զյիշատա՟կ սրբոց վկայիցն. որ
բարի:

---

Շաբաթապահաց յորում ասէք ոչ պահեսցեն, երկուշաբաթի, երեքշաբաթի, հինգշաբաթի զայս ասա։

գձ Քրիստոս Աստուած, յիշեա՛ զննջեցեալ-
օրհ սն ի սուրբ անուանդ քո։ Զգնեալս արեան քո
տէր, յիշեա՛ և հանգո ընդ սուրբս քո։
Եւ ի միւսանգամ քո գալստեանն, ննջե-
ցեալսն մեր, յիշ։

Միանայն չորեքշաբաթի պահոց և ուտեաց.

դկ Փառաւորութիւն առաքեմք քեզ հայր երկ-
օրհն նաւոր, յիշեա՛ զննջեցեալսն մեր, և հանգո
ընդ սուրբս քո։ Որ էակիցդ ես հօր և հոգ-
ւոյ որդիդ միածին, յիշ։ Որ փառակիցդ
ես հօր և որդւոյ հոգիդ ճշմարիտ, յիշ։

Միանայն ուրբաթու պահոց և ուտեաց.

դկ Որ անսկիզբն յէութեան՝ եկիր յաշխարհ,
օրհ մարմնացար ի կուսէն յաղագս մերոյ պար-
տեաց, հանգո զննջեցեալսն մեր։ Որ
ի հօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ և կեանք,
միածին որդի հօր համագոյակից, հանգո։
Որ ի վերդ ես քան զմիտս և զխորհուր-
դըս, և խաչի համբերեալ փրկեցեր զանձ-
ինս, հան։

դկ Որ յանէից ստեղծող գոյից • արար-
որդն չակից հօր բանդ աստուած • Թողութիւն
շնորհեա ննջեցելոց քոց ծառայից • յորժամ
գաս դատել զոր անարատ ձեռօք
ստեղծեր : Որ ի հօրէ առաքեցար •
և մարմնացար ի սուրբ կուսէն • Թողու-
թիւն : Որ ի խաչին անշնչացար • ըդ-
մահու լուծեր զիշխանութիւն • Թողութի :
Որ պսակիչդ ես քոց սրբոց • և ան-
վախճան բարեաց բաշխող • Թողութիւն :

որկ Օրհնեա տէր :

քհ Զի քո է կարողութիւն և զօրութիւն :

որկ Պռօսխումէ :

դպ Սուրբ ած սուրբ և հզօր սուրբ և անմահ :

որկ Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք :

դպ Տէր ողորմեա :

որկ Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և :

դպ Տէր ողորմեա :

որկ Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիս :

դպ Տէր ողորմեա :

որկ Վասն հայրապետին մերոյ տեառն :

դպ Տէր ողորմեա :

որկ Վասն վարդապետաց քահանայից սար :

դպ Տէր ողորմեա ։

որհ Վասն բարեպաշտ թագաւորաց ։

դպ Տէր ողորմեա։

որհ Վասն հաւատոյն հանգուցելոց ։

դպ Յիշեա տէր և ողորմեա։

որհ Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և ։

դպ Տէր ողորմեա ։

որհ Զանձինս մեր և զմիմեանս տեառն ։

դպ Քեզ տեառնդ յանձն եղիցուք ։

որհ Ողորմեա՛ց մեզ տէր աստուած մեր ըստ ։

դպ Տէր ողորմեա տէր ողորմեա տէր ողոր ։

որհ Օրհնեա տէր ։

քհ Զի ողորմած և մարդասէր ես ։

Ի. ետեւոյ ածածնին , ձայն սաղմոսի ,

Տէր տացէ բան , որք աւետարանեն զօրու-
թեամբ բազմաւ ։

Յարիցէ ած՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա , փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

Ճրագալուցի , և ծննդեան տօնին և երրորդ աւուրն·

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու , և ես այսօր
ծնայ զքեզ ։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք · և ժողովուրդք
խորհեցան ՚ի նանիս ։



Երկրորդ

Երրորդ տունն ։

Տէր որպէս զնոյն հաճութեամբ քով պահե-
ցեր զնոսա ։
Բանից իմոց ունկնդիր լեր տէր, և 'ի ձայն ա-
ղաղակի իմ ։

Չորրորդ տունն ։

'Ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յա-
ռաջ քան զարուսեակ ծնայ զքեզ ։
Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ,
մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից
քոց ։

Հինգերորդ տունն ։

Բարձր արարէք զտէր Աստուած մեր. երկիր
պագէք պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է ։
Տէր թագաւորեաց, բարկասցին ժողովուրդք՝
որ նստի 'ի քերովբէս, սասանեսցի երկիր ։

Վեցերորդ տունն ։

Տէր հաներ 'ի դժոխոց զանձն իմ. և փրկե-
ցեր զիս յայնցանէ, որք իջանեն 'ի գուբ ։
Բարձր առնեմ զքեզ տէր, զի ընկալար զիս.
և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս ։

Եօթներորդ տունն, յոխակման և անտոյն ։

Աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա ։

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն նոր • օրհնե-
ցէ՛ք զտէր ամենայն երկիր ։

Ութերորդ ասացն ։

Ցոյց տէր զփրկութիւն իւր • առաջի ազգաց
յայտնեաց զարդարութիւն իւր ։

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն նոր • զի սքան-
չելիս արար ։

Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ·

Տէր 'ի տաճար սուրբ իւրում • տէր յերկինս
յաթոռ իւրում ։

Ի տէր յուսացայ • ո՛րպէս ասիցէք ցանձն իմ,
փախստեա՛ց 'ի լերինս որպէս ճնճղուկ ։

Նաւակատորդէն

Երկինք ցնծասցեն առաջի տեառն, զի գայ զի
հասեալ է տէր 'ի դատել զերկիր ։

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն նոր • զի սքան-
չելիս արար ։

Յետոյն՝ ասասցեն երեք փոխ · զի մինչև 'ի Հոգւոյ գալստեան
150 փոխ ասացեալ պատեհի վճարեցի · և ամեն փոխի վերջն երեք
ալէլուիա · Հոգւոյ գալստեան առաջին օրն ճխը, ճխթ, ճծ,
ասացեալ՝ և փոքր են · որպէս գրեալ է 'ի տօնացուցին ·

ԲՂ Առաքես զոգի քո՝ և ստանաս զնոսա • և նո-
րոգես զերեսս երկրի ։

Օրհնեա՛ անձն իմ զՏէր • Տէր Ած իմ մեծ
եղեր յոյժ ։

գէ Երկրպագեցից ՚ի տաճար սուրբ քո՝ երկիւղիւ
քո Տէր ։

Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք անուան քո, զի
օրհնեսցես դու զարդարս • Տէ՛ր՝ որպէս զինու
հաճութեամբ քով պսակեցեր զնոսա ։

գշ Կեցո՛ զծառայս քո Ած իմ, որ ՚ի քեզ յու-
սացայ ։

Ողորմեա՛ ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի
զօրհանապազ • ուրախ արա զանձն ծառայի քո,
զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ ։

եշ Բարձր արարէք զՏէր Ած մեր • երկրպագէք
պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է ։

Տէր թագաւորեաց, բարկասցին ժողովուրդք՝
որ նստիս ՚ի քրովբէս, սասանեցաւ երկիր ։

որ Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Այ
մերոյ ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր • զի սքան-
չելիս արար ։

շար Եհան զիս ՚ի գբոյ տառապանաց, ՚ի կաւոյ և
՚ի տղմոյ •

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ
առ իս • և լուաւ աղօթից իմոց ։

Տաղանակին ։

Արի՛ Տէր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո ։

Յիշեա՛ Տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա ։

Մարգարէական առաջին տունն ։

Տէր ո՛վ կացցէ 'ի խորանի քում. կամ ո՛վ բնակեսցէ 'ի լեառն սուրբ քո ։

Որ գնայ ամբիծ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն 'ի սրտի իւրում ։

Երկրորդ տունն ։

Բարձր արարէք զՏէր ա̃ծ մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է ։

Տէր Թագաւորեաց, բարկասցին ժողովուրդք՝ որ նստիս 'ի քրովբէս, սասանեսցի երկիր ։

Երրորդ տունն.

Որպէս ցօղ՝ զի ցօղէ 'ի Հերմոնէ 'ի վերայ լերին Սիոնի ։

Զի՛ բարի, կամ զի՛ վայելուչ, զի բնակեն եղբարք 'ի միասին ։

Շողակաթին.

Աստուած հիմունս էարկ նմա յաւիտեան. ընկալաք ա̃ծ զողորմութիւն քո 'ի մէջ ժողովրդեան քոյ ։

Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ ՚ի քաղաք
ա̃յ մերոյ, ՚ի լերան սուրբ նորա :

Վերափոխման ա̃ծածնի .

ա̃ռձ կղր Արի՛ տէր ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ
կտակի սրբութեան քո :

գ̃ձ շբթ Յիշեա́ տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն
նորա :

ա̃ռձ բ̃ձ Իջցէ որպէս զանձրև ՚ի վերայ գեղման, որ-
պէս ցօղ զի ցօղէ յերկիր :

ե̃ձ երէ կղր Ա̃ստուած՝ զիրաւունս՝ քո արքայի տուր, և
զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի :

գ̃ձ ուր Ուրախ եղիցի լեառն սիոն . և ցնծասցեն դստե-
րք յուդայ, վասն իրաւանց քոց տէր :

երէ բ̃ձ Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ, ՚ի քա-
ղաք ա̃յ մերոյ, ՚ի լերան սուրբ նորա :

Առաջ խաչին :

կղր Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . և ե-
տուր ուրախութիւն սրտից մերոց :

՚Ի կարդալ իմում լուար ինձ ա̃ծ լոյս արդա-
րութեան . ՚ի նեղութենէ ինձ անդորր արա-
րեր . ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց :

բ̃ձ Տուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին
յերեսաց աղեղան :

Աստուած մերժեցեր և աւերեցեր զմեզ . բար-



կացար

կացար , և զԹագն 'ի մեզ :

գշե Այսօր է զոր արար տէր • եկայք ցնծասցուք
և ուրախ եղիցուք 'ի սմա :

Խոստովան եղերուք տեառն • զի բարի է • զի
յաւիտեան է ողորմութիւն նորա :

գշի Գովեա երուսաղէմ զտէր :

Եւ օրհնեա զաստուած քո սիօն :

եշի Հիմունք նորա 'ի լերինս սուրբս նորա • սիրէ
տէր զդրունս սիօնի՝ առաւել քան զամենայն
յարկս յակոբայ :

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո , ահաւա-
դիկ քաղաքդ աստուծոյ :

ուբ Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն ա̃յ
մերոյ :

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր, զի սքան-
չելիս արար :

շար Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա •
և տեսցեն ամենայն ժողովուրդք զփառս նորա:

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր • ուրախ
եղիցին կղզիք բազումք :

Հասարակաց կիւրակէից·

Քեզ վայելէ օրհնութիւն ա̃ծ 'ի սիօն և քեզ
տասցին աղօթք յերուսաղէմ :

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մար-



մին

մին եկեացէ ։

Հրեշտակապետաց ։

Օրհնեցէք զտէր յերկնից • օրհնեցէք զնա 'ի բարձանց ։

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա • օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա ։

Յովհաննու կարապետին ։

Դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսցիր • գնասցես առաջի տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա ։

Օրհնեալ տէր աստուած իսրայէլի, որ յայց եղ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ ։

Յովհաննու կարապետին և աթանագինեայ եպիսկոպոսին ։

Աստուած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց • մեծ և ահաւոր 'ի վերայ այնոցիկ, որք շուրջ են զնովաւ ։

Զողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհնեցից • ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւն քո բերանով իմով

Առաքելոց և մարգարէից ։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա ։

Երկինք պատմեն զփառս աստուծոյ, և զա-



րա-

զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն ։

Երեմիայ մարգարէին .

Եհան զիս 'ի գբոյ տառապանաց , 'ի կաւոյ և 'ի տղմոյ ։

Համբերելով համբերի տեառն , և նայեցաւ առ իս . և լուաւ աղօթից իմոց ։

Դաւթի մարգարէին և յակոբայ առաքելոյն .

Յիշեա տէր զդաւիթ , և զամ հեզութի նորա ։
Որպէս երդուաւ տեառն . և ուխտս եդ աստուծոյ յակոբայ ։

Դանիէլի մարգարէին և երից մանկանցն .

Յեկեղեցիս օրհնեցէք զած , և զտէր յաղբերացն իսրայէլի ։
Յարիցէ ած՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա , փախիցեն ատեցիք նորա յերեսաց նորա ։

Նախահարցն .

Առաջնորդեցեր որպէս խաշինս ժողովրդեան քո , 'ի ձեռն մովսիսի և ահարոնի ։
Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի . ձայնիւ իմով առ ած , և նայեցաւ առ իս ։



Հարցն

Հարցն եգիպտացւոց և անտօնի ճգնաւորին.

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ իսրայէլ,
եթէ ոչ տէր էր առ մեզ:
Ընդ յառնել մարդկան ՚ի վերայ մեր, կեն֊
դանւոյն կամեցան կլանել զմեզ:

Տրիփոնի պարսամայ և մանկրէոսի:

՚Ի ձայն ցնծութեան խոստովանութեան. և
՚ի ձայն բարեկենդանութեան:
Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց,
այնպէս փափագի անձն իմ առ քեզ. ա՟ծ:

Մուսն ՚ի վերայն՝ սուրբ լուսաւորչին մերոյ.

Եդին զիս ՚ի գբի ներքնումն, ՚ի խաւարի և ՚ի
ստուերս մահու:
Տէր աստուած փրկութեան իմոյ, ՚ի տուէ
կարդացի և գիշերի առաջի քո:

Հայրապետաց և վարդապետաց:

՛Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և
սուրբք քո ցնծալով ցնծասցեն:
Յիշեա՛ տէր զդաւիթ, և զամենայն հեզու֊
թիւն նորա:

Սրբոց Թարգմանչացն մերոց ։

Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ · որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ ։
Տէր ո՞վ կացցէ ՚ի խորանի քում · կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լերան սուրբ քո ։

Թէոդոսի Թագաւորին՝ և մանկանցն եփեսոսի·

Տէր ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն · ՚ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։
Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա · և զկամս շրթանց նորա ոչ արգելեր ՚ի նմանէ ։

Սրբոց իշխանացն Սահակայ և Համազասպայ ·

Ո՛ յուսայ ՚ի տէր, որպէս լեառն սիոն, մի՛ սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է յերուսաղէմ ։
Լերինք շուրջ են զնովաւ · տէր շուրջ է ըզժողովրդեամբ իւրով՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան ։

Համօրէն մարտիրոսաց ·

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց · ո՛ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո ։



Հա-

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ:

Գէորգայ զօրավարին և ազօկատոսի.

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:
Խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Դեմետրեայ վկային և Բասիլիսկոսի քահանային.

Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց. և բարձր արասցեն զԱծ բերանոց իւրեանց:
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն 'ի նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

Սահանայ գողանացւոյն.

Բայց դու տէր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ.
Տէր զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան 'ի վերայ իմ:

Մուքիասանց վկայիցն:

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց,



այն

այնպէս փափագէ անձն իմ առ քեզ ած ։
Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած, հզօր և կենդանի․ երբ եկից երևեցայց երեսաց աստուծոյ ։

Աստեղանց զօրավարացն ․

Ետուր զմեզ որպէս զոչխար ՚ի զենումն ․ և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ ։
Աստուած՝ ականջօք մերովք լուաք ․ զոր հարքն մեր պատմեցին մեզ ։

Կիրակոսի և մօրն Յուղիտայի ․

՚Ի բերանոյ մանկանց տղայոց և ստնդեայց հաստատեցեր զօրհնութիւն ։
Տէր տէր մեր, զի՞ սքանչելի է անուն քո ՚ի վերայ ամենայն երկրի ։

Սամոնայ և փիլիքսիմոնի ․

Օգնութիւն է մեզ յանուանէ տեառն, որ արար զերկինս և զերկիր ։
Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ իսրայէլ, եթէ ոչ տէր էր առ մեզ ։

Եւստաթէոսի ։

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ

 առ իս

առիս . և լուաւ աղօթից իմոց :
Եհան զիս 'ի գբոյ տառապանաց , 'ի կաւոյ և 'ի տղմոյ :

Թէոդորոսի գաղատացւոյն :

Բարի է խոստովան լինել տեառն . և սաղմոս ասել անուան քում բարձրեալ :
Պատմել յառաւօտու զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո 'ի գիշերի :

Յակոբկայ և իրաւափառայ :

Օրհնեա անձն իմ զՏէր , և ամենայն ոսկերք իմ՝ զանուն սուրբ նորա :
Օրհնեա անձն իմ զՏէր , և մի մոռանար զամենայն տուրս նորա :

Նեստորականաց :

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քո , զի օրհնեսցես դու զարդարն . Տէր՝ որպէս զինու հաճութեամբ քով պսակեցեր զմեզ :
Բանից իմոց ունկնդիր Տէր , և 'ի միտ առ զաղաղակ իմ :

Խոդասի և Պոմեայի·

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր , և հաներ զմեզ 'ի հանգիստ :


Ադա-

Աղաղակեցէք առ Ած ամենայն երկիր. սաղ-մոս ասացէք անուան նորա, և տուք զփառս օրհնութեան նորա:

Կիւրինեայ կուսին և հօրն փիլիպպոսի.

Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա. և զընկերս նորա տարցին նմա:
Բղխեաց սիրտ իմ զպատգամս քո բարի, և ասացից զգործս իմ Թագաւորի:

Սոփեայ և երից դստերացն.

Լուր դուստր և տես՝ խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո, և զտուն հօր քո. զի ցանկացաւ Թագաւոր գեղոյ քո:
Բղխեաց սիրտ իմ զպատգամս քո բարի, և ասացից զգործս իմ Թագաւորի:

Շաբաթապահոց երկուշաբաթի.

Արքայութիւն քո՝ արքայութիւն ամենայն յաւի-տենից. և տէրութիւն քո յազգէ մինչև յազգ:
փոխ Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր, և արդար է յամենայն գործս իւր:
Դշ Երկիրպագից ՚ի տաճար սուրբ քո՝ երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քո, զի
օրհնեսցես դու զարդարն տէր ։

գշ Կեցո՛ զծառայս քո ած իմ, որ 'ի քեզ յու-
սացայ ։

Ողորմեա՛ ինձ տէր, զի առ քեզ աղաղակեցի
զօրհանապազ ։

եշ Բարձր արարէք զտէր ած մեր. երկիրպագէք
պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է ։

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք՝
որ նստիս 'ի քրովբէս, սասանեցաւ երկիր ։

ուր Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն այ
մերոյ ։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. զի սքան-
չելիս արար ։

Մեսեդիք աւուրց երկուշաբթի.

Դարձո՛ զերեսս տէր 'ի մեղաց իմոց. և զամենայն
անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։

Ողորմեա՛ ինձ ած ըստ մեծի ողորմութեան
քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛
զանօրէնութիւնս իմ ։

գշ Երանի ամենեցուն՝ ոյք երկնչին 'ի տեառնէ,
և գնան 'ի ճանապարհս նորա ։

Զվաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է
քեզ, և բարի եղիցի ։



Մե

գշ Մի՛ թողուր զիս տէր ա̃ծ իմ. և մի՛ 'ի բացեայ
առնիր յինէն, հայեա՛ց յօգնել ինձ՝ տէր փրկ-
կութեան իմոյ :

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ :

եշ Մի՛ ընկենուր զիս տէր 'ի ժամանակի ծերու-
թեան. 'ի պակասել զօրութեան իմոյ մի՛ թո-
ղուր զիս :

'Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւի-
տեան. յարդարութեան քում փրկեա՛ և ապ-
րեցո՛ զիս :

ուր Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր.
ըստ բանի քում իմաստուն արա զիս :

Ձայնի իմում լո՛ւր տէր՝ ըստ ողորմութեան
քում. և յիրաւունս քո կեցո՛ զիս :

Ա.ղեց կիւրակէից :

Ո՛ւխտս դի՛ք և կատարեցէ՛ք տեառն ա̃յ մերոյ,
ա̃մքն որք շուրջ էք զնովաւ :

Յայտնի է 'ի հրէաստանի ա̃ծ, և յիսրայէլ
մեծ է անուն նորա :

Յարութեան ըստ ձայնից :

աձ Ամենայն երկիր երկրպագեսցեն քեզ. և սաղ-
մոս ասասցեն քեզ, սաղմոս ասասցեն անուան
քում :

Աղաղակեցէ՛ք առ ա̃ծ ամենայն երկիր. սաղ-



մոս

մ՛ս ասացէք անուան նորա. և տո՛ւք զփառս
օրհնութեան նորա :

ակ Մե՛ծ արարէք զՏէր ինև. և բարձ՛ր արասցուք
զանուն նորա ՚ի միասին :

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն
ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ :

բձ Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր :

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն երկիր. օրհնեցէ՛ք
զՏէր և օրհնեցէ՛ք զանուն նորա :

բկ Օրհնեցէ՛ք զա՜ծ մեր. օրհնեցէ՛ք և սաղմ՛ոս ա-
սացէք անուան աստուծոյ :

Տէր ա՜ծ օրհնեալ. օրհնեալ է տէր զօրհանա-
պաղ :

գձ Մե՛ծ է տէր, և մեծ է զօրութի՜ նորա. իմաս-
տութեան նորա ո՛չ գո՜յ բաւ :

Օրհնեցէ՛ք զՏէր՝ զի բարի է սաղմոս. ա՜յ մե-
րում քաղցր եղիցի օրհնութիւն :

գկ Սաղմ՛ոս ասացէք ա՜յ մերում, սաղմ՛ոս ասացէք
թագաւորին մերում. սաղմոս ասացէք :

Ծա՛փս հարէք ամենայն հեթանոսք, աղաղա-
կեցէք առ ա՜ծ ՚ի ձայն ցնծութեան :

գձ Սուրբ է տաճար քո սքանչելի արդարութ՜բ :

Քեզ վայելէ օրհնութի՜ ա՜ծ ՚ի սիոն. և քեզ
տացին աղօթք յերուսաղէմ :

դկ Այսօր է զոր արար տէր եկայք ցնծասցուք և
ուրախ եղիցուք 'ի սմա ։
Խոստովան եղերուք տեառն. զի բարի է. զի
յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ալէլուիայք ճաշու աւետեաց Աստուածածնին ։

Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ
որովայնի քո ։

Ծննդեան Ճրագալուցի ։

Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ. և զօրութիւն
բարձրելոյն հովանասցի քեզ ։

Ծննդեան առաջին աւուրն ։

Այսօր ծնաւ որ 'ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդին. որ է օծեալ տէր 'ի քաղաքի դաւթի ։ 'ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ ։

Երկ Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Ստեփաննոս. և ընտրեալ յորովայնէ. ճշմարիտ վկայ. սիրող և առաքեալ առաքելոյն. 'ի քէ ընկալաւ
զզուարթնոյն զպսակ ։

Երր Կարապետն յովհաննէս զարհուրեալ՝ 'ի յորովայնէ յորովայն երկրպագէր. սպասաւոր ե-

զի բանին աստուծոյ · և լուեալ զոհաւոր ըն-
ձայնն՝ աղաղակէր ասելով , ահա գառն ած որ
բառնայ զմեղս աշխարհի :

Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ · օրհ-
նեալ ես դու ՚ի կանայս · և օրհնեալ է պտուղ
որովայնի քո :

Դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեցիր ·
գնասցես առաջի տեառն՝ պատրաստել զճա-
նապարհս նորա ·

Եհան զիս ՚ի գբոյ տառապանաց , ՚ի կաւոյ և
՚ի տղմոյ :

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ՝ և
ոչ ստեաց նմա · ՚ի պտղոյ որովայնի նորա նըս-
տուցանել յաթոռ նորա :

Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ · օրհ-
նեալ ես դու ՚ի կանայս · և օրհնեալ է պտուղ
որովայնի քո :

Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ՚ի տաճարն ·

Արդ՝ արձակեա զծառայս քո տէր՝ ըստ բանի
քում ՚ի խաղաղութիւն · զի տեսին աչք իմ
զփրկօղդ աստուած :

Ծաղկազարդին առաւօտեան ·

Տէր աստուած մեր երևեցաւ մեզ · արարէք

տանս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս
սեղանոյ ։

Զարթիքն մեղու ՚ի հոգւոյ փառաւոր՝ այս է ձայնս փոխն ։

կիր Գովեա երուսաղէմ զտէր ։
ըշէ Եւ օրհնեա զածն քո սիոն ։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, եւ օրհնեաց
զորդիս քո ՚ի քեզ ։
Որ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութիւն, պա-
րարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ ։
Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթա-
նան պատգամք նորա ։
Տայ զձիւն որպէս զասր, եւ զմէգ որպէս մոխիր
ցանեաց ։
Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցր-
տոյ նորա ո՞ կարէ կալ ։
Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա, շնչեսցեն
հողմք եւ գնասցեն ջուրք ։
Պատմէ զբան իւր յակոբայ, զարդարութիւն
եւ զիրաւունս իսրայէլի ։
Ոչ այնպէս արար ամենայն ազգաց այլ, եւ
զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա ։
գշ ՏԷՐ ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի թա-
գաւորն. ՚ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։


Զայն-

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա . և ըղ-
կամս շրթանց նորա ոչ արգելեր 'ի նմանէ :
Քանզի առաջեր զնա յօրհնութիւն քաղցրու-
թեան քո . և եդեր 'ի գլուխ նորա պսակ 'ի
քարէ պատուականէ :
Կեանս խնդրեաց 'ի քէն, և ետուր նմա ընդ
երկայն աւուրս` յաւիտեանս յաւիտենից :
Մեծ են փառք նորա 'ի փրկութեան քում .
զփառս մեծ վայելչութեան քո դիցես 'ի վե-
րայ նորա :
Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւի-
տենից . և ուրախ արասցես զնա յուրախու-
թեան երեսաց քոց :
Թագաւոր յուսացաւ 'ի Տէր , յողորմութէ
բարձրելոյն նա մի սասանեսցի :
Գտցի ձեռն քո 'ի վերայ թշնամեաց քոց .
և աջ քո գտցէ զամենայն ատելիս քո :
Դիցես զնոսա որպէս հնոց 'ի հուր` 'ի ժամա-
նակի երեսաց քոց :
Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ ըղ-
նոսա , և հուր կերիցէ զնոսա :
Պտուղ նոցա յերկրէ կորիցէ , և զաւակ նոցա
յորդւոց 'ի մարդկանէ :
Խորհեցան 'ի քէն չարութեամբ . խորհե-

 ցան

ցան զխորհուրդ՝ զոր ոչ կարացին հաստատել :
Արասցես զնոսա հալածականս, 'ի մնացուածս
քո պատրաստեսցես զերեսս նոցա :
Բարձր լեր տէր 'ի զօրութեան քում . օրհ-
նեսցուք, և սաղմոս ասասցուք 'ի զօրութեան
քում
ԿԴ Քեզ վայել է օրհնութիւն Ած 'ի Սիոն . և
քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ :
Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մար-
մին եկեսցէ :
Բանք անօրինաց զօրացան 'ի վերայ մեր . և
զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես :
Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնա-
կեսցէ 'ի գաւիթս քո :
Լցցուք մեք 'ի բարութենէ տան քո . սուրբ է
տաճար քո՝ սքանչելի արդարութեամբ :
Լուր մեզ Ած փրկիչ մեր, յոյս ամենայն ծա-
գաց երկրի, և որ 'ի ծով հեռի :
Որ պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով .
և զգեցեալ է զօրութիւն :
Որ խռովեցուցանէ զմծութիւն ծովու, և ըզ-
ձայն ալեաց նորա ցածուցանէ :
Խռովեսցին հեթանոսք, և երկիցեն բնակիչք
երկրի 'ի նշանաց քոց :

Ցեր առաւօտու՝ ընդ երեկս զուարճացին․
հայեցար յերկիր՝ արբեցուցեր զնա, և բազում
արարեր զմեծութիւն նորա ։
Գետն այ լի եղև ջուրք․ պատրաստ արարեր
զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն ։
Զակօս նորա արբեցուցեր, և բազում արարեր
զարմտիս նորա ։
Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա․ օրհ-
նեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո ։
Դաշտք քո լցցին պարարտութեամբ․ պարար-
տասցին գեղեցկութիւնք անապատի ։
Բլուրք ցնծութիւն զգեցցին, և զգեցցին
խոյք մաքեաց ։
Հովիտք բազում արասցեն ցորեան, աղաղա-
կեսցեն և օրհնեսցեն ։
իշ Տէր ո՛վ կայցէ 'ի խորանի քում, կամ ո՛վ
բնակեսցէ 'ի լեառն սուրբ քո ։
Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօսի
զճշմարտութիւն 'ի սրտի իւրում ։
Որ ո՛չ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար
ընկերի իւրում ո՛չ արար ։
Նախատինս 'ի մերձաւորաց նա ո՛չ առնու․
արհամարհեալ է առաջի նորա չարագործն ։
Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ․ որ

 երդնու

երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ ։

Զարծաթ իւր 'ի վարձու ոչ տայ, և կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ առնու . որ զայս արասցէ՝ նա մի սասանեսցի յաւիտեան ։

ուր Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած ։

Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի . պատրաստ է աթոռ քո 'ի սկզբանէ յաւիտենից դու ես ։

Ամբարձան գետք տէր, և ամբարձին գետք զձայնս իւրեանց . և յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց ։

'Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զբօսանք ծովու ։

Սքանչելի ես դու տէր 'ի բարձունս, վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք ։

Տան քում վայելէ սրբութիւն տէր՝ ընդ երկայն աւուրս ։

շուր Ցնծացէք առ ա͞ծ, օգնական է մեր . աղաղակեցէք առ ա͞ծ յակոբայ ։

Առէք սաղմոս, և տուք օրհնութիւն . սաղմոս ասացէք նմա 'ի ձայն քաղցրութեան ։

Փող հարէք 'ի գլուխ ամսոյ, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց ։



Հրա-

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են ա̃յ
Յակոբայ:

Վկայութիւնն Յովսէփու՝ զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լե-զու զոր ոչ գիտէր՝ լուաւ:

'Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս նորա. և զձեռս նորա յորթ և 'ի թի ծառայելոյ:

'Ի նեղութեան կարդայեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ 'ի վերայ ջուրյն հակառա-կութեան:

Լուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ. և Իս-րայէլ՝ թէ լուիցես ինձ:

Մի եւս եղիցին քեզ ա̃ծք առժամայնք. և մի երկրպագանիցես դու ա̃յ օտարի:

Ես եմ տէր ա̃ծ քո՝ որ հանի զքեզ յերկ-րէն Եգիպտացւոց. բա՛ց զբերան քո՝ և լցից զնա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:

Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սըր-տից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս ան-ձանց իւրեանց:

Օ՜ թէ ժողովրդեան իմոց լուեալ էր ինձ,



կամ

կամ խորտակել զճանապարհս իմ գնացեալ էր:
Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զ-
թշնամիս նորա, և 'ի վերայ նեղչաց նորա ար-
կեալ էր զձեռն իմ:
Թշնամիք տեառն ստեցին նմա, և եղիցին
ժամանակք նոցա յաշխարհի:
Կերակրեաց զնոսա 'ի պարարտութենէ ցորե-
նոյ, և 'ի վիմէ մեղր յագեցոյց նոցա:

Համբարձմանն Քրիստոսի ըստ ինն աւուրց:

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր.
համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թա-
գաւոր փառաց:
Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ և ա-
մենայն բնակիչք նորա:
Նա ինքն 'ի վերայ ծովու հիմունս էարկ նմա,
'ի վերայ գետոց պատրաստեաց զնա:
Ո՞վ ելցէ 'ի լեառն տեառն, կամ ո՞վ կացցէ
'ի տեղւոջ սրբութեան նորա:
Որ սուրբ է ձեռօք և ամբիծ սրտիւ, որ ո՛չ
էառ զնանրութիւն յանձն իւր, և ո՛չ երդու-
աւ ընդ ընկերի իւրում նենգութեամբ:
Սա առցէ զօգնութիւն 'ի տեառնէ, ողորմու-
թիւն յԱյ փրկչէ իւրմէ:

Այս ազգ է՝ որ խնդրէ զնա, խնդրէ տե-սանել զերեսս ա̃յ Յակոբայ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր․ համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թա-գաւոր փառաց։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց, տէր հզօր զօ-րութեամբ իւրով, տէր հզօր 'ի պատերազմի։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր․ համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թա-գաւոր փառաց։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց, տէր զօրութ̃ց․ սա ինքն է Թագաւոր փառաց։

Հոգւոյն սրբոյ գալստեան․

կե Զօրութեամբ տեառն լ̃ն եղև երկինք, և բա-նիւ տեառն երկինք հաստատեցան․ և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

բշ Ելի՛ք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք առ ա̃ծ փրկիչ մեր։

ղշ Երգեցէ՛ք տեառն երգ նոր․ ծառայեցէ՛ք ա̃ն ուրախութեամբ։

դշ Վասն անուան քո տէր՝ կեցուսցես զիս, ար-դարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

 Ոււ-

եշ Ողորմեա՛ ինձ տէր զի հիւանդ եմ ես, բժշ-
կեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ ։
ուր Յիշեա՛ տէր զգթութիւնս քո, և զողորմու-
թիւնս քո՝ որք են յաւիտենից ։
շաբ Յեկեղեցիս օրհնեցէ՛ք զա՟ծ, և զտէր յաղբե-
րացն իսրայէլի ։

Տապանակին ։

Արի՛ տէր ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ
կտակի սրբութեան քո ։

Վարդավառին ։

կիր Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա ․ ձայն եղև
բշ յամպոյն՝ որ ասէ, դա՛ է որդի իմ սիրելի ընդ
որ հաճեցայ ։
գշ Բարձրութիւնք լերանց նորա են ․ նորա է ծով
և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղ-
ծին ։

Ալէլուիայք ճաշու վերափոխման ածածնին ինն աւուրն ։

կիր Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ ․ և զօրութիւն
բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո ։
բշ Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ ․ օրհ-
նեալ ես դու ՚ի կանայս ․ և օրհնեալ է պտուղ
որովայնի քո ։
գշ Արի՛ տէր ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ


կտակի

կտակի սրբութեան քո:

Յովակիմայ եւ Աննայի.

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. եւ յիշեսցի անուն քո ը̃ ամենայն ազգս ազգաց:

Նուակասանեաց խաչին.

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ զտեղի յարկի փառաց քոց:

Սրբոյ խաչին ըստ աւուրց.

կիր Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո զորդի ա-
ղախնոյ քո. եւ արա առ իս նշան բարութեան:
բշ Ետուր երկիւղածաց քոյ նշան, զի ապրեսցին
յերեսաց աղեղան:
գշ Սիրեաց տէր ընդ սիոն եւ ընտրեաց բնակել 'ի
նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս
յաւիտենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ
ընդ սա:
դշ Տէր 'ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս
յաթոռ իւրում:
եշ Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօրութ̃ց.
ցանկայ եւ փափագէ անձն իմ 'ի գաւիթս քո:
ուր Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին
յերեսաց աղեղան:
շբթ Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո աջով քով

 եւ

և լո՛ւր մեզ ։

Եկեղեցւոյ ․

Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօրութեանց ․ ցանկայ և փափագէ անձն իմ ՚ի գաւիթս քո ։

Վարագայ խաչի ։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց ․ և ետուր ուրախութիւն սրտից մերոց ։

Յարութեան ըստ ձայնից ․

աձ Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ սիոնի ․ ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ ։

ակ Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն ՚ի նոր ․ օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց ․

բձ Ձայնիւ հարկէք ամենայն հեթանոսք , աղաղակեցէ՛ք առ ած ՚ի ձայն ցնծութեան ,

բկ Արի՛ տէր ած իմ ՚ի հրամանս քո՝ զոր պատուիրեցեր ․ և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցի՛ն զքև ։

գձ Ուրախ եղև իսրայէլ յարարիչ իւր ․ որդիք սիոնի ցնծասցեն ՚ի թագաւորն իւրեանց ։

գկ Եկա՛յք և տեսէ՛ք զգործս այ , որպէս ահեղ են խորհրդով՝ քան զամ որդւոց մարդկան ։

դձ Հաճեցար տէր ընդ երկիր քո , և դարձուցեր զգերութիւն յակոբայ ։

դկ Յարեաւ ա՛ծ՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախեան ատելիքն նորա յերեսաց նորա։

Նւէլուխայք ճաշու աւուրց պահոց ըստ ձայնից ·

աձ Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

'Ի ժահահոտ վիրապէն ելեալ · զարքայն վա-
րազ բանիւ բժշկեալ ։
Հովուապետեանն զքաջ հովիւն ընտրեալ · լու-

սաւորիչ հայոց առաքեալ :
Բարեխօսութեամբ սրբոյն ընկալեալ՝ զմեր ըն-
կալցիս պատարագ բանի , Աղաչեմք :

Կանոն՝ Մեծերորդ կիւրակէի : ՔԻ.

Բանաւոր խորհրդեան • բանից տեսողին • զոր
գուշակեցին :
Զոր 'ի սաղմոսին • ողբեալ աբեղին • դաւ-
թի հօր քոյին :
Զգալուստ քո կերպին • գուշակեալ հոգին •
առ մարգարէին :
Թէ հօր բարբառին • առաջի քոյին • յերկ-
րորդ գալստին :
Եւ հաւատային • քո մարգարէին • սուրբ դա-
նիէլին :
Ի տանէ դաւթին • ցեղէ յուդային • արեան
հօր քոյին :
Զնոյն ողբեալ նորին • զգալուստ ահագին •
յոր կատարածին :
Զհօրէ քոյին • վկայէ՝ բանք նորին • դանիէլ
մեծին :
Ահա կեցո զմեզ տէր և առողջացո յոյս մե-
կիւրակէի յաւուրս տէրունի , Աղաչեմք :



Կանոն

Իսկ քուրքն բարի · և երանելի · մկրտչին գովելի ։
Աղերս մաղթելի · առ տէրն տուաքի · վասն
ղողորի ։
Թէ զոր ունէիր · սա ասա հրամանդի · և 'ի
մահ մատնի ։
Յիսուս զայրացեալ · ուր եղիք հարցեալ · ու 'ի
տապանն նկեալ ։
Անդէն արտասուեալ · առ հայր աղօթեալ ·
ընդդէմ գոհացեալ ։
Մարթայ ասացեալ · այս չորս օր անցեալ ·
մեռեալդ է հոտեալ ։
Նա պատասխանեալ · թէ հաւատացեալ · ընդ
փառս տեսեալ ։
Եւ ձայն ամբարձեալ · ղազարէ կոչեալ · ընդ
մեռեալն յարուցեալ ։
Ոտիւքն կապեալ · ձեռօքն պատեալ · երկաւ-
անուեալ ։
Յիսուս հրամայեալ · զպատանն լուծեալ · և
թողուլ երթալ ։
Օգնեա մեզ 'ի նեղութե մերում տէր, Աղա-
չեմք ։

Այդ մեծ փառաց · եղեր հաց կենաց · և ջուր
ծարաւեաց ։

Փողով գումարաց · սաստիկ ամբոխաց · ազ-
գաց և ազանց ։

Գան քեզ նախընթաց · տան փառս փառաց ·
գովեստ գգուանաց ։

Ներքին ոստ ձիթենեաց · ողոյքն արմաւե-
նեաց · հանդերձ տարածած ։

Գան բարձեալ բաղկաց · զճիւղն տերևեաց ·
քեզ յաղթանակաց ։

Ձայնս ովսաննայից · և փառս 'ի բարձանց ,
քեզ արքայդ փառաց ։

Օրհնեն սրբասաց · զտէրդ տերանց · զար-
քայդ հրեղինաց ։

Դաւթեան սաղմոսաց · եկիր տէր գթած · և
գաս օրհնած ։

Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարոց՛ յոյս մեր
կիւրակէի յաւուրս տէրունի , Աղաչեմք ։

Գանձ Ոտնլուային · Ի

Այս խորհուրդ լցաւ · անդ գուշակեցաւ ·
աստ կատարեցաւ ։



Աս-

Աստուած մարդացար • ընդ օրինօք մտար • քահանայացար :

Այսօր վերացար • վերնատուն նստար • և զա- տըն կերար :

Հին օրէնքն անցար • զի գիրն լցար • և նորն սկսար :

Տէրդ որ մարմնացար • ընդ մեր մատնեցար • և վաճառեցար :

Նոր խորհուրդ բացար • որ 'ի ծածկս անկար • զենջակ ածածար :

Եւ լուայ կարգար • զառաջնոյն կոչեար • մեզ օրինակար :

Այր առաքինար • զմարդիկ վեր բարձար • յերկինս ընկալար :

Որ հպարտացար • նոյն կործանեցար • այլ ոչ կանգնեցար :

Տէր քոյին շնորհաւ • լուա զմեզ բարկաւ • սրբեա բաժակաւ :

Ահա աղաչեմ զմեզ 'ի մեղաց • քաւիչ յան- ցանաց, Ա. ղաչեմք :

Սիրտ իմ սասանի • տարակուսի զիս ունի • վասն յուդայի :

Որ ակըն առնէի • նմա ատաջէի • 'ի ծածկս անկանի :



Նո

Նա ոչ ամաչէ · և ոչ զարհուրի · սիրօղն որ-
ծանթի :

Նոր սեղան դնի · և հաց բաղարջի · և մնա-
ցակ գինի :

Փրկիչն բաղմի · զասաւքն եկջանկի · 'ի յերե-
կոյի :

Զհայն 'ի տեղ մարմնի · օրհնեալ ճաշակի ·
և տայ ամենի :

Զէ հայն բարի · զործոց նմանի · բաղմաց
կարելի :

Զգինին արևնի · նոր նշան ուխտի · և տայ
ամենի :

Գինին տեղ կուսի · կերպ մարտիրոսի · որ 'ի
մահ ձգնի ·

Տէր իմ արժանի · արա զմեզ հացի · քո սե-
ղանի :

Ահա ազատեա զմեզ 'ի մեղաց :

Որք որ փափագին · ուտել զայն մարմին · ո-
րով սրբեսցին :

Խոնարհիլ պարտին · իւր յանցաւորին · ըստ
օրինաց փրկչին :

Թողուլ կամովքին · զյանցանս 'ի սրտին · զեօ-
թանասնեկին :

Իսկ որք ստամբակին · եղեալ օրինին · որ ա-



պատ-

տուածային ։

Յետ ու աղանին . Թէ խոստովանին . կեա ուխ-
տից քաւելին ։

Բայց թէ հաղորդին . ՚ի հնդէն մէկին . թա-
ւութինք լինին ։

Դարձեալ որք խորհին . չար բայց ոչ գոր-
ծին . կխողին . տուժին ։

Եւ թէ գործեցին . կամ յանձն ՚ի նմին .
միայն չորս պատժին ։

Այլ գործօղք չարին . եթէ զղջասցին . ՚ի
յետին շնչին ։

Ըստ անսուտ առակին . ՚ի հնդէն մէկին . քա-
ւութինք լինին ։

Թէ մեղք մարդկային . ծանր ըստ ցորենին .
այպէս եղիցին ։

Բայց հոգեկանին . որ նման ձիթին . կէան
քաւեսցին ։

Ապաշխարողին ։ որ սիրով սրտին . բոլորն ջըն-
ջին ։

Այս խորհուրդ յայտնին . եղեալ կանոնին .
մարդկան սահմանին ։

Իսկ ածային . ընաւ ոչ սահմանին . մեր բազ-
մողորմին ։

Ահա աղաչեմ զմեզ ՚ի մեղաց ։



Բունէ

Բանք քրիստոսական · քարոզ խրատական ·
տամ ձեզ ընծայական ։

Դասք արքունական · քահանայական · և աշ-
խարհական ։

Մերժել որբական · զրկան ընական · և ե-
կամտական ։

Այս որ արբենան · և շուայտանան · աղքա-
տաց ոչ տան ։

Այս որ բոզանան · ցեղուցեղ շնանան · և
պարշ գինեանան ։

Որ կախարդ ուսան · կամ մահու դեղ տան ·
կամ տղայասպան ։

Որք յարկեն մեղան · կամ յերդմն ոչ գթան ·
կամ անարգական ։

Որք սիրոյ դեղ տան · կամ սուտ երդուեան ·
կամ յիշոց տան ։

Որք վաղ 'ի շահ տան · և վաճառական · սուտ
խաբողական ։

Որք նախանձեցան · կեղծաւորական · ընդ եղ-
բօր մախացան ։

Որք չեն արժան · սուրբ հաղորդութեան ·
այլ աստուածապան ։

Ահա դատեմ զմեզ 'ի մեղաց ։

Դարձեալ լուայարուք · և ունկնդրեցարուք · դա-

ւանեցարուք ։

Պահօք պնդեսցուք • յաղօթս յամեսցուք • ըզ-
ձեռս ՚ի տուրս կալցուք ։

Ծնգով նուաստասցուք • սուգ մեղաց սգաս-
ցուք • ՚ի միշտ հեղգասցուք ։

Միշտ խաղաղասցուք • և հանդարտեսցուք •
մի՛ հպարտասցուք ։

Զմեղս ատեսցուք • խոստովանեսցուք • ապաշ-
խարեսցուք ։

Զօրէնս սիրեսցուք • սրբութեամբ կացցուք •
և արդարասցուք ։

Ի մեզ հայեսցուք • զայլս մի՛ քննեսցուք • և
մի՛ դատեսցուք ։

Զսիրտս սրբեսցուք • զմիտս լուասցուք • զան-
ձինս մաքրեսցուք ։

Զչարս յանձանց հանցուք • բարիս արասցուք ։

Եւ հաղորդեսցուք • ընդ տէր միասցուք • և
միշտ գոչեսցուք ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛ ։

Եւ ես առաւել զյորդորումն •

Զանձինս մեր և զմիմեանս ։

Սրովբէ մարմնային • քնար երկնային • քա-
ւիչ եւային ։

Սուրբ աստուածածին • ծնօղ միածնին • մայր

անճառ բանին ։

Խորան հրեղինին ․ վառք լուսոյեղէն ․ կեանք
հեթանոսին ։

Պսակ մկրտչին ․ թագ ստեփաննոսին ․ լոյս լու-
սաւորչին ։

Ազգաց համայնին ․ որ զքեզ դաւանին ․ սուրբ
կոյս տիրածին ։

Տուր խաղաղութիւն ․ բարեաց լիութիւն ․ և
առողջութիւն ։

Մեծ հայրապետին ․ և քաջ արքային ․ և զօ-
րաց նորին ։

Խոստովանողին ․ ապաշխարողին ․ և հաղորդողին

Հասցես յօգնութիւն ․ տացես սրբութիւն ․
ընդ քեզ միութիւն ։

Գանձիս ասողին ․ տէր մխիթարին ․ թող ըզ
մեղս անձին ։

Տուր մեզ ամենի ․ կեանս բարելի ․ զուարթ
՚ի բարի ։

Գանձ Մշակ օրհնութեան ․ ԻԱ.

Լուծեալ որոտաբեկ և միջնորմ ․ մայր մե-
ծնելին յառաջմանն յորդոր ։

Օտարման հանեալ իւր աշխարաւոր ․ ՚ի վեր
հայէր յորդին մեսա որ ։



Ն

Ու վայ ձեզ որում ողբալոյ. և ձերոց որ-
կեալ ատեան ահաւոր:

Յիսուս որդի մօրս միածին. աչացս լոյս ա̃ծ
զօրաւոր:

Ո՛յ գեղեցիկ աչեր ծովային. այսօր շիջար ’ի
տեսանելոյ:

Ո՛յ գերադոյն գլուխ գանդրահեր. խոնարհե-
ցար որպէս մեռելոյ:

Ո՛յս ոսկեթել մօրուս վարդադոյն. դու կարմ-
րացար որպէս յորդանոյ:

Օրհնեալ եկեալդ ’ի կամաւոր չարչարանս ա̃ծ
անմահ, Ո̃ղչեմք:

Գանձ Օրհնութեան յարութեան փառաւոր. ԻԲ

Ընծային լոյսն այսօր ծագեալ. յորժամ փըր-
կիչն մեր յարուցեալ:

Իւղաբերից կանանցն երևեալ. զաստուածութիւն
նորա փառաւորեալ:

Հրեշտակական ’ի վիմին նստեալ. և զյա-
րութիւնն աւետարանեալ:

Որ աշակերտացն սրտամբ փութալ. մեռա-
ատնից զաւառն սփռեցեալ:

Ի Գալիլեա լերինն գնալ. և զՅիսուս տեսցեն
յառաջեալ:

Ընկալան ձայնիւն բերկրեալ • սուրբ իւղա-
բերքն և ուրախացեալ :
Աշակերտացն աւետիս տուեալ • և խնդումն
ձայն փութացուցեալ :
Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յայս սուրբ
կիւրակէի յաւուրս տէրունի, Աղաչեմք :

Գանձ Յարութեան կիւրակէից : ԻԳ

Արդ լուսաւորեմ • արդ փառաւորեմ • ար-
դարև ցնծամ :
Սուրբ սիոն գոչեմ • զօրդիս ժողովեմ • ձեռն
առեալ պարեմ
Նոր արքայ քո գայ • բերեալ քեզ խնդոյ •
յաւիտեան տաղիւրոյ :
Զհողին ադամայ • և որդւոց նորա • վերբեալ
վերանայ :
Գտեալ յեդովմայ • զգեստուք բոսորայ • ա-
րեամբ կարմրանայ :

Գանձ Յարութեան : ԻԴ

Այսօր ցնծացէք • այսօր զուարճացէք • օրս այս
խնդացէք :
Ազգ քրիստոնէից • համօրէն լեզուի • որք են
յաշխարհի :

Օ.

Զի լոյսն լինի · յերա տաղեմ · յարութե
յարկի :

Զոր սուրբ գրիգորի · հայցմամբն լուսոյ · յա֊
մենայն տարի :

Որով ճշմարտի · ամէն հաւատլի · Թէ աստ֊
ուած յերկրի :

Գանձ յարութեան : ԻԵ

Նախաւոր բանն միացեալ · ադամնի մեծին
կատարեալ :

Զդրունս խորոց բանտին խորտակեաց · զյա֊
ւիտենից կապեալսն արձակեաց :

'Ի տապանէն այսօր յարուցեալ · իւղաբերից
կանանցն երեւեալ :

Զտրտմութիւն նոցա փարատեալ · որք խնդ֊
րէին զմեծդ խաչեալ :

Գանձ Յարութեան : ԻԶ

Կանգնեա՛ զմեզ կարող · կազդուրեա՛ մերկող ·
կեցո՛ աղաչող :

Որ իջեր 'ի հող · յերկինս հանող · հօր քում
աւանդող :

Զորս քո դաւանող · և երկրպագող · անուան
քում կարող :

Որք են աղօթօղ · սրբութեանն պահօղ · և արթուն կացօղ :

Սուրբ խոստովանօղ · և ապաշխարօղ · մեղաց աւեցօղ :

Գոնջ Յարութեան : ԻԷ

Անձ աւետեաց ձայն ուրախալի · տայր գաբ-րիէլ պետն հրաշալի :

Զուարճն յարութեան հնչեաց աշխարհի · և աւետեաց կանանն քրիստոսի :

Ձեզ աւետիք որդիք սիօնի · այսօր յարեաւ փրկիչն աշխարհի :

Ձեզ աւետիք մանկանց սիօնի · այսօր ձեզ նոր փրկիչ երեւի :

Գոնջ Յարութեան : ԻԸ

Նոր դշխոյ բերկրած · նոր թագիւ պճնած · նոր լուսով վառած :

Սուրբ մայրդ կենաց այսօր խնդացած · և ուրախացած :

Նախածն որ ննջեաց · այսօր զարթուցած · մէջ 'ի յատարաց :

Նաւ 'ի յիւր կամաց · ինքն ինքեամբ զօրեաց դքունն թօթափեաց :

Զօրքն հրեղինաց • սաւառնաթեւոց • կան
քեզ 'ի յատայ :

Գանձ Յարութեան : ԻԹ

Ուրախացիք սիրողք անմահին • զի շնորհեցաւ
ձեզ ուրախութիւն :
Ուրախացիր կոյսդ տիրածին • այսօր յարեաւ
միածին որդին :
Ուրախացիր սուրբ ա̃ծածին • այսօր յարեաւ
կուսածին որդին :
Ուրախացիր ծնող անմահին • այսօր յարեաւ
անդրանիկ որդին :

Գանձ Յարութեան : Լ

Տրտմեալ մարիամն մագդաղենացի • լայր ար-
տասուօք զանէրն մատուայ :
Ներեալ զանոյշ իւղն խնկոնաց • ուր թաղե-
ցար ա̃ծդ բարձանց :
'Ի հրեշտակէն ձայնէն աւետեաց • զարհուրե-
ցան զաւրք զինուորաց :
Որք ընթացան 'ի գոյժ բողոքաց . եթէ յա-
րեաւ նա որպէս ասաց :

Գոհաց Յարութեան ։ Ա.Ռ.

Ռամիկս որ ընտրեալ • աստէն ժողովեալ • ի
պաշտօն կանգնեալ ։

Զ յարուցելոյն օրհնեալ • յաւուրս պատուեալ • կիրակի եղեալ ։

Որ նա յարուցեալ • կանանցն երեւեալ • և
մխիթարեալ ։

Նոցա պատուիրեալ • առ եղբարսն արթեալ •
զաւետիսն տալ ։

Իսկ յայս կիրակիս • տէրունի օրիս • միաշաբաթիս ։

Յարուցեալ պատուիս • և փառաւորիս • ա̃ծդ
ամենիս ։

Հրեշտակաց օրհնիս • մարդկանէ գովիս և երկրպագիս ։

Զ մերս ընկալցիս • պաղատանս սրտիս • յայս
կիրակէիս ։

Ահա կեցո́ զմեզ տէր և արդարացո́ յայս մե̃
կիւրակէի յաւուրս տէրունի, Աղաչեմք ։

Գոհաց Յարութեան • Ա.Ր

Քրիստոս յարեաւ զզօրսն աւերեաց • և ըզ
գերութիւն մահուան աղատեաց ։



Քր-

Օրհնեալ յորեաւ զդեւն հալածեաց . զդի-
ւսն յանդգանաց նախնեացն քաւեաց :
Օրհնեալ յորեաւ մեզ յոյս պարգեւեաց .
եւ յարութիւն կենաց պատրաստեաց :
Օրհնեալ յորեաւ մեզ կեանս հաստատեաց .
եւ զօրութիւն մահու խափանեաց :

Գանձ Նոր կիւրակէին : ԺԳ·

Արդ աստ յորեայց . փառաւորեցայց . եւ արդ
բարձրացայց :
Նշոյլ ձայնեաց . զքաջութիւնն ատոց . ըն-
տեառնն փառաց :
Մովսէս գուշակեաց . Դաւիթ վկայեաց . Դա-
նիէլ յայտնեաց :
Զհօրն բարբառեաց . զտէրութիւն յայտ-
նեաց . զդժոխսն կեղեաց :
Զհիմունս քակեաց . զդրունս փշրեաց . ըզ-
նիգսն խորտակեաց , Աղաչեմք :

Գանձ Նոր կիւրակէին : ԺԴ·

Իսկ այսօր կոչի . սա նոր կիւրակէ . խորհրդով
'ի լի :
Զատիկ կրկնակի . կարմիր անուանի այս օր-
կիւրակէ :

Զի այսօր ներկի · ձեռքն Թովմայի · սուրբ
առաքելն :
Կողէն խոցածի · արեամբն Յիսուսի · կարմիրն
ոչ փոխի :
Եւ այն զի կոչի · կարմիր կիրակի · և յոյժ
պատշաճի :

Գովք Նոր կիրակէին : ԼԸ

Յարեաւ տէր · մարգարէն գոչեաց · յառաջ
գուշակեաց :
Զայնիւ նուագեաց · տաւիղեաւ երգեաց ·
քնարիւ պատմեաց :
Զելանելն ասաց · յաթոռոյն փառաց · ՚ի
կառս նստած :
Զօրս ժողովեաց · բանս գումարեաց · արար
գերեդարձ :
՚Ի խաչին փրկեաց · զձեռսն տարածեաց · զա-
զերն քարշեաց :

Գովք Նոր կիրակէին : ԼԹ

Բանից սրբասնեալ · զտեղին որ տեսեալ · Թով-
մայի պատմեալ :
Զի անդ ոչ եղեալ · Թովմայ առաքեալ · յոր-
ժամ տէրն եկեալ :


Ո.-

Ա՛յրոյն տապեալ . նա չհաւատացեալ . բանիւ
ուխտ եդեալ :

Մինչ այսօր տեսեալ . զտէրն յարուցեալ .
և հաւատացեալ :

Կրկին տէրն եկեալ . փակեալ դրօք մտեալ .
նոցա երևեալ :

Զթովմաս կոչեալ . յանուանն ձայնեալ . և
զկողն ցուցեալ :

Որ անդէն մխեալ . զմատունսն առաքեալն .
և հաւատացեալ :

Ահա կեցո զմեզ տէր և արդարոյն յոյս
սուրբ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք :

Գործ Նոր կիւրակէին : Ա

Քրիստոս յարեաւ բանն ՚ի սկզբանէ . նոյն
առեցեալ մարմնովն ՚ի կուսէն :

Փակեալ վիմով ՚ի գերեզմանէ . անշարժ զկնիք
մատանւոյն պահէ :

Որպէս ծնաւ ՚ի կոյս յարգանդէ . և զկուսու-
թեան ծնողին ոչ խախտէ :

Նոյնպէս յարեաւ ՚ի կնքեալ վիմէ որ համա-
տեղ մեռեանց վիմէ :

՚Ի գալիլեայ ժամադիր առնէ . և զաշակերտսն

անդէն տեսանէ ։

Աշխարհամատրան կիւրակէին ։ ԼԲ.

Կենաց փայտի տեղի տնօրէն • որ կառուցար
'ի միջի մարդկան ։
'Ի քեզ եկեալ անմահից աղբերն • ով լուսա-
ձեմ խորան սրբութեան ։
Դու անեղին տեղի հանգստեան • փառաց բա-
նին միշտ ընդունարան ։
Երկնաւորաց զօրաց բնակարան • ուր է սպա-
սեն մարմնոյ փրկարան ։
Նոյեան տապան խուղ աբրահամեան • աստ-
ուածահրաշ մովսէսի խորան ։
Դու վեհագոյն տանն սրբութեան • այն տա-
ճարին մեծ սողոմոնեան ։
'Ի քեզ ունիմք զմիտս և զբան • զաչս մարմնոյ
և զհոգւոյս մաղթան ։
Ով լուսազարդ խորան սրբութեան • սեղան
տէրական և վէմ պատուական ։
Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յայս սբ
կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։


Գոհ

Գանձ Համբարձմանն տէրունական : ԼԹ

Տեսեալ վերնոց զանմահիցն արքայ • և զար-
մացան ընդ տեսիլ նորա :
Հիանային ընդ գեղոյ նոր • և սոսկային հար-
ցանել զնա :
Տեսանէին կերպիւն ադամայ • զբանն աստուած
միացեալ 'ի նմա :
Ասեն այս ո՞վ որ զինեալ և գայ • զգեստն
կարմիր իւր 'ի բոսորոյ :
Հնձան հարեալ է 'ի յեդովմայ • ճմլեալ
'ի խաչն զմեղս ադամայ :
Այսօր հզօր փառօք համբառնայ • տէր զօր-
ութեանց թագաւորն գայ :
Օրհնեալ սէր քո ա՟ծային • որ կեցացեր
յազգս մարդկային •
Աղաչեմք :

Գանձ Մեծահրաշէ Հերահէին : Խ

Սխրալէ եղեալ • հրեշտակն ընտրեալ • դրն-
գոյն արթնացեալ :
Երկնայնոցն եկեալ • նմա պաշտպանեալ •
և սպասաւորեալ :
Որք են անդ կացեալ • 'ի վերայն արկեալ •

զգլխաւորն երանեալ :

Իսկ մին որ անցեալ • հրեշտակին ոչ եկեալ •
որ նմա ծառայեալ :

Ապիկուն որ եկեալ • նա հարցաքննեալ •
զդատաձայն խնացեալ :

Զոր նա ասացեալ • Թէ այսօր եղեալ • առն
հանդիսացեալ :

Գառն մեր ընտրեալ • զի տէրն մարմնացեալ •
՚ի մեր գամն լծեալ :

Ընկալ զբանս մաղթաւոր՝ բարեխօսութեամբ
զօրացդ երկնաւոր ,

Աղաչեմք :

Գանձ Պենտեկոստէին : ԽԱ.

Կենդարար բղխումն ՚ի հօրէ • հոգին յառաջ
էր ՚ի սկզբանէ :

Զմիաբանեալ լեզուս բաժանէ • զաշտարակին
շինուածն քակէ :

Ըստ մարիամ որ կոյսն ողջունէ • զմարդանալ
բանին անօրինէ :

՚Ի յորդանան զխառնակեցն յայտնէ • աղաւ-
նակերպ իջմամբ վկայէ :

Այսօր զխոստումն եկեալ կատարէ • զառա-
քելոցն ՚ի տեառն յխառնէ :

Ըո-

Բանեալ ժողով սուրբ մետասանին · 'ի վեր-
նատունն գումարելին :
Մխիթարիչ հոգւոյն մնայլին · զոր խոստա-
ցաւ որդին միածին :
Ընկալ զնուէր բանիս մաղթանաց · և մաքրեա
զմեզ 'ի մեղաց ,
Աղաչեմք :

Գանձ Տաղարանի և Ընծայող · Խմբ

Տաճարդ երկնային · տուն քերովբային · ան-
ձէ անմահին :
Գուսար սիօնին · դշխոյդ վերային · հարսն
անծային :
Հաստատեալ վիմին · առաքելոյն , և մար-
գարէին :
'Ի կողէ փրկչին · շինեալ յարկ նորին · զօրէն
Եւային :
Թարգման խորհրդին · փեսայ քէն · հարսն
առագաստին :
Տեառն տնտեսողին · ակման ազնուակին · դոյն
շափիւղային :
Սրբոյ խորանին · սուրբ տապանակին · ոսկի
սափորին :
Պահեա զմեզ շնորհիւ քոյին՝ տաճարդ երկ-


նային,

նոյին , Աղաչեմք ։

Գանձ Աստուածածնին ։ ԽԳ

’Ի խորհուրդ խորին ․ բանիւ պետրոսին ․ հա–
ւատոյ վիմին ։

Զոր ’ի Թաբորին ․ մինչ ընդ տեառն էին ․
’ի լեառն առանձին ։

Ասաց թէ շինին ․ զտաղաւարին ․ յանուն
երեքին ։

Մին տեառն յիսուսին ․ մին եղիային ․ և մին
մովսէսին ։

Որ գուշակեաց ․ պահոց խորհրդին ․ երեք
յիսնակին ։

Մեծս այս ընդ մարմնին ․ ընդ հոգւոյ ամառա–
նին ․ մնաց ձմեռայնին ։

Զի չարն և բարին ․ երկուքս այս գործին ․ և
պահօք քաւին ։

Մարմնոյս յին ․ մնաց մովսէսին ․ հոգւոյն
եղիային ։

Ակն կեցմ զմեզ տէր և արդարացմ յայս աւուր
կն բանէի յաւուրս տէրանէ ,

Աղաչեմք ։

Գանձ Վարդավառին · ԽԴ

Վայք տեառն յայտնեալ զխորհուրդն լուսին·
աշակերտացն եւ որոց զնդէն :

Հանէ զնոսա 'ի Թաբօր լերին · զերիս ընտ֊
րեալսն 'ի մէջ նոցին :

Զպետրոս որ վէմն էր սուրբ հաւատոյն · ըղ֊
մեծն յովհաննէս և զեղբայր նորին :

Նոյն նոցա զփառս նախաստեղծին · զոր մեր֊
կացեալ էր մարդն առաջին :

Ամպ լուսաւոր հովանաւորեալ · սուրբ առա֊
քեալքն զահի հարեալ :

Հայր 'ի վերուստ յերկնից վկայեալ · դա է
որդի իմ սիրեցեալ :

Օրհնեալ ած մարդացեալ՝ և կեանք մեզ
յայտնեալ, Աղաչեմք :

Գանձ Վերափոխման սրբոյ Աստուածածնին · ԽԵ

Լոյս 'ի լուսոյ անձն դիմաւոր · որդի եղեր
կուսին կամաւոր :

Այսօր էջեր զօրօքդ երկնաւոր · 'ի պատիւ մօր
քոյին փառաւոր :

Զհոգին մաքուր վեհին լուսաւոր · աւանդե֊
ցեր փառօք հրաշաւոր :



Ն֊

Եւ յաշխարհէ աստի անցաւոր · ըստ փոխե-
ցեր մարմնով փառաւոր :

Բանից սրբոց գունդն աշակերտաց · զընծըն-
կալ մարմինն բարձեալ :

Բարեխօսութեամբ կուսին ընծայման՝ արժա-
նացո զմեզ քաւութեան ,

Աղաչեմք :

Գտանի Վերափոխման սրբոյ Աստուածածնին : ԽԶ.

Բանից սրբոց գունդն աշակերտաց · զընծըն-
կալ մարմինն բարձեալ :

Գեթսեմանի ձորն յայն գնացեալ · զընծայն
դամբանն ամփոփեալ :

Սեփոնիա ոմն յանդգնեալ · և ՚ի դագաղ կու-
սին ձեռնարկեալ :

Իսկ անարատ մարմինն երանեալ · ամենազօր
կուսին սրբանեալ :

Չորեքնիւթեայ բնութք շաղկապեալ · ընդ բա-
նական հոգւոյ միացեալ :

Սրբոյ կուսի այսօր բաժանեալ · ընդ հրամա-
նաց արարչին եղեալ :

Զհոգին յիսուս որդին իւր առեալ · և ՚ի յեր-
կինս վեր համբարձեալ :

Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին ·

մեզ այց առնել յաւուրն ահաւորին , Աղաչեմք։

Գործք ասուէ Աստուածածնին : Խէ

Զօրեքկերպեան աթոռ հրաշական • կազմեալ ակամբք սուրբ երկոտասան ։
Ամենօրհնեալ կոյս անապական • ծնամայր տաճար տիրական ։
Ճրագ լուսոյ ջահ արփիական • բուրվառ ոսկի հրոյն աստուածական ։
Ի քեզ վառեալ հուրն վերինական • այն որ փայլեաց ՚ի Թաբօրական ։
Ի քեզ ծագեալ արեգն աննման • լուսաւորել զազգս որդւոց մարդկան ։
Ի քէն ծաղկեալ վարդն անապական • ուստի բուրեաց հոտն անմահութեան ։
Ամենայն ծաղկեալ բուրաստան • տեղի փառաց սուրբ երրորդութեան ։
Եկեղեցւոյս մեր հաստատութիւն • մանկանց սորա մնալ անսասան ։
Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին • մեզ այց առնել յաւուրն ահաւորին, Աղաչեմք։

Գործք Խաչվերացին : Խր

Անճառելի փառաց տէառըն • ներքնական բան

վասն խաչին ։

Յիմարութի է և ճառ խաչի · հրէից ազգի և հեթանոսին ։

Որ բարձրացաւ 'ի գողգոթային · 'ի նախահօրն մեր տապանին ։

Տօնախմբօղք յայս նաւակատիս · տեսէք զյի-սուս բազմեալ 'ի խաչիս ։

Եւ աղերսիւ գոչմամբ յառեննիս · պաղատես-ցուք առ տէրն ամենիս ։

Օրհնեալ ես վայտ փրկութեան · նշան յաղ-թութեան, Ա. գոչեմք ։

Թագաւորն մեր · յիսուս միածին · ճառա-գայթ որդին ։

Երբ զայս գիտացին · ազգն որ խաչեցին · զար-քայն երկնային ։

Զվայտ սուրբ խաչին · առեալ թաղեցին · 'ի մէջ աղբիւսին ։

Զի որք դաւանին · զնձ անբաժին · միայեալ 'ի նմին, Ա. գոչեմք ։

Գանձ Նաւակատեաց սրբոյ խաչին ։ խթ

Զորեքկերպեան սեղան սոսկալի · անմահական գառինն և հացի ։

Աթոռ կազմեալ չորեք անկիւնի · աւարողին


երկնի

երկնի և երկրի ։

Ամենօրհնեալ նշան պաշտելի. քրիստոնէից զէն անպարտելի ։

Եկեղեցւոյ պահ պանծալի. ներկեալ արեամբն տեառն յիսուսի ։

Բարեխօսեա անդադարելի. մահացելոյն ՚ի քեզ յիսուսի, Աղաչեմք ։

Գանձ Սրբոյն Խաչին ։ Ծ

Որ խաչն փայլեալ. յերկնից ցուցեալ. բազմաց երևեալ ։

Ընդ առաւօտն ելեալ. յարևելս ծագեալ. և ճառագայթեալ ։

Ժամս երեք կացեալ. գողգոթայ կառեալ. բոցն ցուցեալ ։

Լոյսն տարածեալ. և զլեառն լցեալ. ձիթենի կոչեալ ։

Սատանի սխրացեալ. մարդկի զուարճացեալ. մխիթարից ձայն առեալ ։

Քաղաքն զգլխեալ. ՚ի մի գումարեալ. ՚ի մատրանն եկեալ ։

Սուրբ խաչն օրհնեալ. բանիւ գրուածեալ. քաղցրաձայն գովեալ ։

Ահա ընկալ զերկրպագութիւնս խաչին քրիս-

 տոսի,

սուրբ, Աղաչեմք ։

Գոհաց Մարգարէ որդւոյ Խաչենոյ · ԾԱ.

Եկեալ և հասեալ ժամանակ մերձեալ · որ
նշանն յայտնեալ ։

Թուղթիկ սրբանեալ · և աշակերտն ընտրեալ ·
յովէլ անուանեալ ։

Անսուաղ կացեալ · Ճ աւուրս պահեալ · զաւը
խաչն խնդրեալ ։

Աստուած գթացեալ · և նոցա յայտնեալ · ըզ-
խաչն որ ամփոփեալ ։

Տեսին լոյս ծագեալ · և զնշանն լցեալ · վարդ-
կոչեցեալ ։

Ահա՛ կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ շնորհի-
ւ խաչի քո , Աղաչեմք ։

Գոհաց Գրիգորի որդւոյ Խաչենոյ · ԾԲ

Այսօր տօնեմք զերևումն քո · պատուեմք ըզ-
գիւտ խաչիդ աստուծոյ ։

Օ՛ ճառ խաչիդ մեծի սքանչելեաց · յիմարու-
թիւն է կորուսելոց ։

Այլ զօրութիւն է մեր աստուծոյ · որպէս
ասէ անօթն հոգւոյ ։

Ահա՛ կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ խաչիւ քո



որդւոյ

սրբոյ , աղաչեմք ։

Գանձ սրբոց Հրեշտակապետաց ։ Ձ․Գ․

Կազմող կարգաց զէակս ամենայն ․ նախ ան-
ուանեն զզօրսն հրանիւթեան ։
Զբազմաչեայ հոյլս քրովբէական ․ և զվեց-
թեւեան զունդն սրբազան ։
Որք զուարթ սուրբն երգեն միաբան ․ սրբհնա-
բանեն զէն քաղցրաձայն ։
Զորս աթոռոց և դասք տէրութեան ․ իշխա-
նութեան և սուրբ զօրութեան ։
Հրեշտակապետք դասք պետական ․ դասք
հրեշտակաց սպասաւորական ։
Ընդ գաբրիէլ պետն վերնական ․ և միքայէլ
նորին համանման ։
Զոր և տայես մարդկան պահապան ․ յայսմ
հետէ մինչև յաւիտեան ։
Բարեխօսութեամբ դասուն վերնական՝ պա-
հեա զմեզ յաւէժ անսասան , Աղաչեմք ։

Գանձ Ծննդեան Յովհաննու Մկրտչին ։ Ձ․Գ․

Ի ծնալ կուսին ․ երկուորք հասանեն ․ եղիսա-
բեթին ։
Ապա ծնանի ․ մայր կարապետին ․ զձայն բար-

բառլին ։

Ութ աւուրք անցին · ծննդեան տղային · թըլ-
փատել եկին ։

Կոչել կամէին · յանուն հօր նորին · զաքա-
րիային ։

Նա մայր տղային · սուրբ կուսապետին · ոչ
ետ թոյլ նոյին ։

Մինչև ակնեցին · ծեր քահանային · զաքա-
րիային ։

Նա խնդրեալ նորին · տախտակ որ գրին · զա-
նուն տղային ։

Յովհաննէս եդին · զանուն նորածնին · որ շը-
նորհ անուանին ։

Ապա արձակին · կապ լեզուի նորին · լուծմամբ
զաւակին ։

Ուրախութեամբ քոյին մկրտչին՝ զմեր ըն-
կալցիս պատարագ բանի ։

Ա. շուշեմք ։

Գանձ Գլխատման Յովհաննու կարապետին ։ ՃՁԵ

Րամից բազմութիւն · այն հրապարակին · յայն
բազմականին ։

Յորժամ և տեսին · զգլուխ մկրտչին · սուրբ
կուսապետին ։



Օղա-

Զաղաղակ բարձին · և անդէն լացին · և հա-
ռաչեցին ։
Եղուկ տային · և վայ կարդային · այն պիղծ
հերովդին ։
Զօրն անիծեցին · և նզովեցին · զայն չար Իշ-
խանին ։

Գանձ գլխատման Յովհաննու Կարապետին · Ն. Զ.

Իսկ բարբառոյն ձայն · կայր նա ՚ի դողման ·
յահ և ՚ի սասան ։
Տէր չեմ բաւական · քում բարձրութեան ·
և անհասութեան ։
Երկինք չբաւանան · զհուրդ ա̃ծական · և ան-
քննական ։
Յովհաննէս ծառայն · դարձաւ ՚ի փառան · և
՚ի հրէշտաան ։
Յորժամ որ հատին · զգլուխ կարապետին ·
մեծ մարգարէին ։
Աշակերտք եկին · առին և բարձին · զնա և
թաղեցին ։
Որք հաւատային · այն ձայնի բանին · սուրբ
կարապետին ։
Ահա́ կեցո́ զմեզ տէր և արդարացո́ · բարե-
խօսութեամբ սրբոյն Յովհաննու, Աղաչեմք ։


Գանձ

### Գանձ Յովհաննու կարապետին և Յակոբայ առաքելոյն : ԾԻԷ

Բանից խմբից արքայն խոնարհեալ · ՚ի յոր-
դանան ՚ի լուացումն եկեալ :
Իսկ յովհաննէս հոգւովն լցեալ · եւես զնծ
մարմնով պարարեալ :
Գառն այ զնա անուանեալ · ժողովրդեանն
մատամբ ցուցեալ :
Ո՛վ երանեալ և փառաւորեալ · սուրբ կա-
րապետ պարծանք մեզ յայտնեալ :
Ընդ քեզ առցես միջնորդ կցորդեալ · զմեծ
նահատակն զյոբն երանեալ :
Բարեխօսութեամբ սրբոցս բղխեալ՝ զմերս ըն-
կալցիս պատարագ բանի, Աղաչեմք :

### Գանձ երջանկոյ Ստեփանոսի · ԾԻԸ

Զորեքկերպեան աթոռոյն կրողիչք · դուք օրի-
նակ բանիւ բորբոքիչք :
Նոր սիոնի աւետարանիչք · բանին կենաց ե-
ղէք քարոզիչք :
Ծառայք բնութեանս զօրացուցիչք · սուրբ աղ
կենաց հոգւոյ համեմիչք :
Խթան մտաց մարդկան զարթուցիչք · յերկրէ
յերկինս վերաբերիչք :



Բա-

Բարեխօսութեամբ սոցին ըղձական արժա-
նացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք ։
Բարդուղիմէոս առաքեալ մարաց • և Թադէ-
ոսն հայաստանեայց ։
Փիլիպպոս 'ի հապաշ վկայեաց • սուրբն Թո-
մաս հնդկաց վաճառած ։
Եւ մատթէոս քարոզն կենաց • յակոբ ալ-
փեանն միջագետաց ։
Եւ շմաւոն եղբայրն վառաց • որ յարդարոյն
յովսեփայ ծնած ։
Մատթիա ընդ մետասանից • պօղոս քարոզն
հեթանոսաց, Աղաչեմք ։

Գանձ երկոտասան Առաքելոց • ՈՕխԹ

Լուսեալ անուանք սուրբ երանելեաց • առա-
քելոցն աւետարանչաց ։
Որք ընդ ոլորտս տիեզերաց • քարոզեցին ըզ-
բանն կենաց ։
Պետրոս ընտրեալ գլուխն բազմաց • և անդ-
րէաս յառաջ կոչեցած ։
Սուրբն յակոբոս նախկին վկայեաց • և յով-
հաննէս յաստուծոյ սիրած ։
Բարդուղիմէոս՝ առաքեալ մարաց • և Թադէ-
ոսն հայաստանեայց ։

Սուրբն Թովմաս Հնդկաց վաճառեալ · և մի-
լիպաս հայաշատանաց ։

Յակոբ Ալփեան միջնորդեաց · և Մատթէոս
քարոզն կենաց ։

Անձն Յուդա՝ Ղեբէոս կոչեալ · և Շմաւոն եղ-
բայրն շնորհաց ։

Սուրբն Յակոբոս արդար անուանեալ · Տեառն
Յիսուսի եղբայր կոչեցեալ ։

Մատաթիաս ընդ մետասանից · Պօղոս քարոզն
հեթանոսաց ։

Բարեխօսութեամբ սուրբ առաքելոցն՝ ողոր-
մեա՛ Տէր քո արեամբ գնելոցս, Աղաչեմք ։

Գանձ Դաւթի Հարքացւոյն և Յակոբ արդարոյն · Կ

Այսօր փայլէ օր քո լուսաւոր · սուրբ յիշա-
տակ անձինս խմբաւոր ։

Ո՛վ երջանիկ օծեալ թագաւոր · արքայ յաղ-
թող Դաւիթ զօրաւոր ։

Աստուածահայր եղեր յոյժանաւոր · Թագա-
ւորաց լինել ահաւոր ։

Առեր մախաղ և ցուպ հովուաւոր · սաղմոսե-
ցեր երգս արձանաւոր ։

Ուրախացիր Սիօն պերճացեալ · տեառն ի յա-
ռագաստ կազմեալ ։

Ով շնորհեցաւ քեզ միայն ընտրեալ · առաքելոց դասուն մեծարեալ ։
Տեառն յիսուսի եղբայր սիրեցեալ · ՚ի յաւետիս բան մարմնոյ ծնեալ ։
Յակոբ խաբօղ արդար անուանեալ · որպէս նախնին իսրայէլ կոչեալ ։
Խնամոք երկու կտակաց ՚ի կարգի · եկեղեցւոյ մեր պայծառացի ։
Աստուածահօր երջանկին դաւթի · և յակոբայ եղբօրն յիսուսի ։
Աստուածաբան երգոյն սաղմոսի · կաթուղիկեայ քաղցրաբան թղթի ։
Հրեղէն պարիսպ եղէն սիոնի · լուսաւորեալ սուրբ զեկեղեցի ։
Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական՝ արժանացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք ։

Գանձ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն · ԿԱ.

Խորք անքննելին անճառ անհասին · հօր արարչին և մարդասիրին ։
Որ կանխագրեաց զգալուստ խոր բանին մարգարէիւք հնին իսրայէլին ։
Որ ծնաւ օծեալն ՚ի տանէ դաւթին · ՚ի բեթղահէմ յեսսեայ քաղաքին ։



Աւ

Այլ մեք տօնեմք զտօն աբբային · զնծահօր սուրբ մարգարէին :

Ընկա՛լ զբանս մաղթանաց · միջնորդութեամբ նորին ըղձանաց , Աղաչեմք :

Անպարագիր բանն հայրական · նուաստանայ յարգանդ կուսական :

Որ խօսեցաւ յօրէնս իւրական · մարգարէիւքն միջնորդական :

Աւետաւոր երգ բարբառական · յունկն Եւայի մարգարէացան :

Զայն որ երգուաւ տէր երգօղ դաւթեան · անսասան մնալ մինչեւ յաւիտեան :

Ընկալ զբանս մաղթանաց · միջնորդութեամբ նորին ըղձանաց , Աղաչեմք :

Գանձ սրբոյն Ստեփաննոսի նախավկային : Կր

Կենդանարար անմահ ողկուզին · որ ճմլեցաւ արեամբ 'ի խաչին :

Դու վաղահաս պտուղ նմին · սուրբ ստեփաննոս պսակ առաջին :

Որ յանձն առեր զչարչարանս նորին · ճմլեալ արեամբ յատեան հնձանին :

Որ զօրացեալ քո 'ի յատենին · աղաղակեալ ձայնիւ քաղցրաւէն :

 Ահա

Ահա՛ բացեալ կամարն երկնային. և կայ Յի-
սուս յաջմէ ծնողին:

Խառնեալ զարիւնդ ընդ արեան մկրտչին. պը-
սակեցար փառօքն երկնային:

Բարեխօսեա առ տէրն ամենի՝ զմերս ընդու-
նել պատարագ բանի, Աղաչեմք:

Գանձ օրհնոյն Պետրոսի և Պօղոսի. ԿԳ

Գերակայ գնդին. գլուխ ընտրեալ հօտին.
գահակալ քոյին:

Պետրոս հրաշալին. վէմն հաւատին. եղբայրն
Անդրէին:

Այս յակոբոսին. սուրբ յովհաննիսին. աւե-
տարանչին:

Խաչեալ փիլիպպին. խոցեալ Թովմային. պա-
րեալ մատթէին:

Ընդ բարթուղիմին. և Թադէոսին. յուդայ
յակոբին:

Ընկալ զնուէրս մաղթանաց. միջնորդութե̄
սոցին ըղձանաց, Աղաչեմք:

Գանձ որդւոցն որոտման՝ Յակոբայ և Յովհաննու. ԿԳ

Գերագոյն գնդին. գորագոյլ դասին. գերի-
մաստ հօտին:



Հրա-

Հրաշալի բաժին երկոտասանին · ընտրելոց խըմ-բից ։

Վեհ ցուցեր զնոսին · զորդիս զեբեդին · յով-հան ընդ յակոբին ։

Անուանքն փոխին · բանէրգեսային · կոչմամբն քոյին ։

Որք որոտային · վերուստ հնչեցին · զբանդ ե-ղեալ մարմին ։

Որդիքն որոտման · յակոբ եւ յովհան · քեզ հաճոյացան ։

Որ եւ փութացան · քարոզել զբան · յոր հր-աւիրեցան ։

Ահա ընկալ զերգս բանական՝ բարեխօսու-թեամբ սրբոցս ըղձական , Աղաչեմք ։

Գանձ Բարթողիմէոսի եւ Թադէոսի եւ Յուդայ առաքելոցն երկոտասան · ԿԵ

Ի գալ Թադէին · հրամանաւ փրկչին · յաշ-խարհս մերին ։

Օրհնու գեղորդին · նախ առ աբգարին · յուռ-հա քաղաքին ։

Տալով արքային · զառողջութիւն · չար մե-րոց ախտին ։

Եղբայր Թադէին · Թումաս խորին · ազդեալ



ընկերին ։

ընկերին ։

Աստուծոյ զարմին ․ բարդուղիմէոսին ․ մեծ ա-ռաքելին ։

Գալ յեղբօր տեղին ․ 'ի քարոզութիւն ․ հա-յոց աշխարհին ։

Իսկ և յուղդայի ․ հասեալ 'ի յորմի ․ ուր և կատարի ։

Է և սա որդի ․ հիւսանն յովսէփի ․ հօրն քո ։

Եղբայր յակոբի , սիմօն կանանի ․ յովսէ յուստոսի ։

Բարեխօսութեամբ սուրբ առաքելոյս՝ ողոր-մեա տէր քո արեամբ գնելոյս , Աղաչեմք ։

Գանձ եւթանասուն երկու Աշակերտացն տեառն ․ Կ.Օ.

Իջեալ սուրբ հոգին ․ յօր պենտեկոստէին ․ 'ի վերնատանին ։

Հնչմամբ սաստկագին ․ ելից զտեղին ․ յորում նստէին ։

Լեզուօք հրեղինին ․ հանգեաւ 'ի նոսին ․ դաս մետասանին ։

Եւ յեօթանասունին ․ հարիւր և քսանին ․ որ անդէն կային ։

Աղբերքն յելիմին ․ ծառքն արմաւենին ․ քաղց-րուայց բանին ։



Բա-

Բարեխօսութեամբ սուրբ առաքելոցն՝ ողոր-
մեա՛ Տէր քո արեամբ գնելոցս, Աղաչեմք:

Գանձ համօրէն Մարգարէից · Կն:

Փողին նախ ընտրեալ · հրաւիրմամբ կոչեալ ·
հրաշիւք լցուցեալ :
Յոր նահատակեալ · գեղեցն յաղթեալ · բա-
րակ զայն գործեալ :
Եղիա ելեալ · եղիսէ մնացեալ · եսայի ող-
ցեալ ·
Ովսէ սերմանեալ · ամոս քարոզեալ · միքիա
պատմեալ :
Նաւում նորոգեալ · ամբակում ճաշեալ · սո-
փոնիաս կոչեալ :
Երեմիա ընտրեալ · 'ի գուբն ընկեցեալ · 'ի
տափնաս մեռեալ :
Դանիէլ տքնեալ · մանկունքն ոչ այրեալ ·
կառատես գրեալ :
Անդրէաս շարժեալ · զաքարէ տեսեալ · մա-
ղաքէ ընտրեալ :
Ահա՛ սրբեա՛ զմեզ 'ի մեղաց՝ բարեխօսութե՛
սուրբ տեսանողաց, Աղաչեմք :

Գոհանք սրբոց Հայրապետաց : ԿԸ

Արբեալ շնորհին · առաքեալք քոյին · աշակերտք նոցին ։

Յերոթէոսին · և Դիոնէսին · Իգնատիոսին ։

Սեղբեստրոսին · և սուրբ Յակոբին · մեծն Աթանասին ։

Սեւերիանոսին · և Կիւրղիոսին · և Աղէքսանդրոսին ։

Սքանչելագործին · Նիկողայոսին · մեկնիչ Եփրեմին ։

Բարսեղ կեսարին · ա̄ծաբանին · Նաև Նիւսացին ։

Ոսկեբերանին · Ներսէսի մեծին · Մեսրոպ Մաշտոցին ։

Ահա ազատեա զմեզ 'ի մեղաց' բարեխօսութեամբ սուրբ հայրապետաց, Աղաչեմք ։

Գոհանք Իգնատիոսի աստուածազգեցի և Պօղիկարպոսի հայրապետաց․ ԿԹ

Իգնատիոսին · մլձակեալ բարին · 'ի քէն սահմանին ։

'Ի տիս համբակին · առեալ 'ի գրկին · քո աստուածային ։

Յարբունս հասակին • եղեալ տղային • Իգնա-
տիոսին :

Հետեւեալ նորին • սուրբ յովհաննիսին • ա-
ւետարանչին :

Պօղիկարպոսին • ընկերեալ նմին • յաշակեր-
տութիւն :

Արժանի լինին • օծման քոյին • յաթոռ
մատթէին :

Որ յանտիոքին • 'ի մեծ քաղաքին • յասո-
րեստանին :

Պողիկարպոսին • հասեալ վիճակին • զմիւռին
քաղաքին :

Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական՝ արժա-
նացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք :

Գանձ Որդւոց եւ Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. ◆

Ի յազնիւ ծառէս • 'ի սուրբ արմատէս • 'ի
լուսաւորչէս :

Սուրբն Արիստակէս • ձեռնադրի վեհէս • յաս-
տուածարեալէս :

Ութ ամ սրբայէս • կեցեալ հովուեալէս • սպան
Արքեղայէս :

Սուրբն Վրթանէս • տասնուհինգ ամէս • հո-
վուելով հօտէս :



Քաջ-

Ժուժկալեալ աղէտէս · փորձանաց գազանէս·
փոխադրիր յերկրէս :
Սուրբն յաղթական · յաւէտ մրցական· քեզ
մեծարական :
Սեց ամ ՚ի լճման · կեցեալ քեզ պաշտօնն·
զոր սառն տեղայն :
Գրիգորէս յաղուան · կոյսն պատուական ·
արգասաւորման :
Սպան սենեան · ՚ի կատարելական · ձի ըն-
թացական :
Սա է ախոյեան · հինն և զլուխ անկեան · ա-
թոռոյն տղուան :
Բարեխօսութեամբ սորոցս ընծայեան՝ արժա-
նացո զմեզ քաւութեան, Ողորմեա :

Գանձ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին · ՀՍ.

Որոտն բարբ երկնից երանեալ · տէր սուրբ
յակոբ շնորհօք զարդարեալ :
Որ ՚ի հոգւոյն սրբոյ զօրացեալ · հայր և հո-
վիւ ազգաց դաւանեալ :
՚Ի սքանչելիս մեծ յայտնեալ · և մարդկան ձեռ-
նաւորն ընտրեալ :
Տէր սուրբն յակոբ հայրապետ ընտրեալ ·
խորաղաղտեաց կարգն ևս մի փոխեալ :



Սեց

Անծ տապանի տեսլեանն ընծայեալ · աշխա-
տութեամբ 'ի լեառն գնեալ :

Ով հրեշտակաց քեզ սպասաւորեալ · տէր
սուրբ յակոբ շնորհօք զարդարեալ :

'Ի յարմատոյ սուրբ լուսաւորչին · շառաւի-
ղեալ մարդ ա̃ծային :

Ծաղկեալ պտուղ զանթառամելին · 'ի հո-
գևոր սուրբ բուրաստանին :

Փայլեալ բանիւ 'ի մէջ հանդիսին · 'ի նիկիոյ
մեծ սինհոդոսին :

Խոստովանեալ սուրբ երրորդութիւնն · հաս-
տատեցեր զուղղափառութիւնն :

Բարեխօսեա առ տէրն ամենի՝ խաղաղու-
թիւն շնորհել աշխարհի , Աղաչեմք :

Գանձ Մեծին Ներսէսի հայրապետին · ՀԲ

Գող հանդոյն մեհի · նախնւոյն գրիգորի ·
սուրբ հայրապետի :

Ներսէս մեծ ազգի · տոհմէ պարթևի · և
պահլաւունի :

Ցեղ արշակունի · յորդւոց քետուրի · և աբ-
րահամի :

Լոյս հայոց ազգի · օրինադրողի · կանոնք հաս-
տողի :


'Ի

Ի հայաստանի · երեք հազարի · քառասուն աւելի ։

Վանք սուրբ շինի · պանդոկ հանգստի · և եկեղեցի ։

Բարեխօսութեամբ սրբոյն ներսէսի՝ զմեզ ընկալցիս պատարագ բանի , Աղաչեմք ։

Գանձ սրբոյն Իսահակայ պարթեւի հայոց հայրապետին ։ ՃԳ

Ո՛վ հայր իսահակ · որ տեսողունակ · որպէս գերունակ ։

Մինչդեռ սարկաւագ · ՚ի վաղարշ քաղաք · տեսեր հրաշունակ ։

Բեմն ամպաքատակ · սեղան ակնակապ · անդ հաց ւողկուզակ ։

Յաջմէ ծառ շիտակ · չորս ոստ խաչունակ · ւ երեք բարունակ ։

Իսկ մինն մնակ · չոր մեզ նմանակ · անբեր բարունակ ։

Յահեկէ ծովակ · աթոռ սառնորակ · ծածկոց սեւ համակ ։

Եւ այլքն յայտնունակ · որ քեզ երեւակ · ւ այլ բազմօրինակ ։

Բարեխօսութեամբ սրբոյս ըղձական՝ արժանացո՛ զմեզ քաւութեան , Աղաչեմք ։

Սա հոգին շարժեալ · առ նոսա ազդեալ ·
հայ գիր յօրինեալ ·

Բազում աշխատեալ · և ոչ ինչ օգտեալ ·
ձեռն յԱծ ձգեալ :

Ի բալու տքնեալ · մեսրոպ աղօթեալ · Ած
գթացեալ :

Հրեշտակ տեառն իջեալ · մատամբ փորագ-
րեալ · 'ի վիմի դրոշմեալ :

Աջ ձեռն երևեալ · իբր 'ի ձեռն գրեալ ·
եօթն գիր յայտնեալ :

Մեսրոպ հմտացեալ · գիր վրաց զուգեալ ·
և աղուանից տուեալ :

Վարդապետս կարգեալ · և դպրոց բացեալ ·
մանկունս ուսուցեալ :

Ի նաւասարդի · 'ի վերջին օրի · իսահակ ծը-
նանի :

Նոյն օր վախճանի · 'ի գեօղն 'ի բլրի · 'ի վա-
ղարշկերտի :

Բարձեալ դագաղի · 'ի տարօն տանի · յաշ-
տիշատ թաղի :

Խաչ լուսոյ կազմի · վերայ դագաղի · մեսրո-
պայ մեծի :



Ն-

Եւ յովսէփ նստի. յաթոռ տէրունի. տասն և մէկ տարի ։

Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական՝ արժանացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք ։

Գանձ Նոր ուխտի թարգմանչաց ։ ՀԵ

Բարձրեալ անքննելին. բնաւից լրութիւն. բաւականութիւն ։

Անհաս բարձրութիւն. երեք երեւելն. և փառք միական ։

Որ ես պարզութիւն. լուսափայլութիւն. և անմահութիւն ։

Երրեակ միութիւն. կատարելութիւն. անհաս բարձրութիւն ։

Պարզող վրանին. անսիւն խորանին. երկնից կամարին ։

Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական՝ արժանացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք ։

Գանձ Պետրոսի հայրապետին և Աղեքսանդրոսի առաքելագետին ։ ՀԶ

Պետրոս պանծալի. պետրոս բաղձալի. պետաղ- հրաշալի ։

Անուն գովելի. բազմաց ըղձալի. և փափագելի ։

Հովիւ քաջ բարի • Նման քրիստոսի • մատ-
նեալ կամալի :
Ո՛վ զարմանալի • հանգոյն հրեշտակի • տէր
սուրբ ծերունի :
Որ զտէրն ամենի • տեսեր 'ի յերկրի • նըս-
տեալ յաթոռի :
'Ի քոյին գահի • բազմեալ սիրալի • քեզ մի-
այն յայտնի :
Արդ տէր լսելի • քեզ տեառնդ եղիցի • բանքն
աղերսալի :
Տեառն պետրոսի • ւարխողոմի • արանց ցան-
կալի :
Տէր տուր ամենի • բարեաց պարգեւի • ամե-
նայն ազգի :
Սուրբ զեկեղեցի • անսասանելի • պահեա՛ 'ի
յերկրի :
Հաւատով բարի • յուսով տենչալի • սիրով
ըղձալի :
Ահա՛ ծագեա՛ զլոյս քո փառաց • անտեսդ 'ի
յաչաց • քաւիչ յանցանաց , Աղաչեմք :

Գանձ Յովհաննու ոսկեբերանին • Հ:

Յանեղական լուսոյն զարդարեալ • մեծն յով-
հաննէս այրն սրբասնեալ :

Հայրապետաց գերագոյն գահեալ. ոսկեբերան
անուամբ հռչակեալ:
Յորդահոսան հոգւովն լցեալ. զծարաւ բնու-
թիւնս մեր արբուցեալ:
Կարապետային սրբոյ նմանեալ. զչարագործն
յանդիմանեալ:
Զոր թագուհին բարկութեամբ լցեալ. վասն
յովհաննու ժողով աքսորեալ:
Յիւր աթոռոյն զնա աքսորեալ. 'ի կոկիսոն
հայոց յուղարկեալ:
Բարեխօսութեամբ ոսկեբերանին՝ գթա՛ 'ի
մեզ արքայդ երկնային, Աղաչեմք:

Գանձ սրբոյն Բարսղի կեսարացւոց հայրապետին: Հր.

Այսօր մանկունք սուրբ եկեղեցւոյ. տօնեն
զտօն աւուր քո պատուոյ:
Սիւն լուսեղէն սուրբ եկեղեցւոյ. բարեխօս
պարիսպ հաւատոյ:
Տեսլեամբ սրբոյն 'ի յերեսից. արքայ նե-
րեմ խորհին ստոյ:
Հաղարապետ խորոցն ո՛յ. և վարդապետ բա-
րի հաւատոյ:
Բուժիչ ուրկին 'ի յախտից մարմնոյ. վիրաց
չարին 'ի յողջանալոյ:

Բուժիչ կնոջն մեղուցելոյ • վնասակ զրոյն խա-
պառ ընչելոյ ։

Զերկնասաստող կորեալն յոյ • գտեր նման
տեառն խորհրդոյ ։

Զանդարձ հրեայն՝ բանիւ քո լուսոյ • ածեր
'ի լոյս տեառն խաչելոյ ։

Բարեխօսութեամբ սրբոյս ընձայման՝ արժա-
նացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք ։

Գանձ Նիկողայոսի հայրապետին ։ Հթ

Գոհաք հայրապետին • րաբունիք բանին • որ
զմեզ ուսուցին ։

Որոց սքանչելին • Նիկողան արին • և խոր քե-
ռորդին ։

Համանուն նորին • Նիկողայոսին • սուրբ հայ-
րապետին ։

Աստուածաբանին • սքանչելագործին • և ձրգ-
նաւորին ։

Գոտու հրաշացեալ • սուրբ հայրն երանեալ •
և փառաւորեալ ։

Զկապեալն արձակեալ • մահուանէ փրկեալ •
զբանտեալսն ազատեալ ։

'Ի ծովու հասեալ • նաւորդաց օգնեալ • 'ի վը-
տանգէ զերծեալ ։



Զա-

Զամուլն արձակեալ . և ծնունդ շնորհեալ .
զմեռեալս յարուցեալ :
Բարեխօսութեամբ սրբոյս ըղձակեան' փրկեա
զմեզ տէր 'ի նեղութեան , Աղաչեմք :

Գանձ սրբոց Ղևոնդեանց քահանայից : Ձ

Լուսեալ սնուամբ սրբոյն երամին . քահա-
նայից գերակայ գնդին :
Սուրբն յոլովէի վայոյ ձայնե ցին .
ղեւոնդ երէցն փառանդե ցին :
Տէրն սահակ այն ըղշաւ նին .
եպիսկոպոս արհի պանծա լին :
Մուշեղ երէցն այն աղքակե ցին .
Թաթիկ անուն քաջ առաքի նին :
Խորէն գալիլն ընդ աբրահա մին .
սուրբ սարկաւագ պաշտօնեայ ա րին :
Որք խաչակից եղեն անմա հին .
դնելով զանձինս 'ի վերայ հօ տին :
Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական' արժա-
նացո զմեզ քաւութեան , Աղաչեմք :

Գանձ սրբոց Ոսկեանցն : ՁԱ

Լնութիւ շնորհաց հոգւոյդ գերակայ . տան մեզ
պարգևք ոսկեանցն յարակայ :

 Ոսկա-

Օժանդակել մեզ միշտ յարա կայ․
կատարողաց զկշտակ սո ցա:
Հրճուալիք երգով գովեստի սո ցա․
որք Աստուծոյ եղեն քոյ վկայ :
Եւ որ հեղաւ սուրբ արիւն սո ցա․
հոյն պէս պէս գոյնս որակս նայ:
Ի փառատուութիւն ախոյից ապա դայ․
որք հաւատով զխմեն առ նո սա :
Տէր տերանց մծ ողորմեա՛ մեզ տօնողացս
աղօթիւք սոցա , Աղաչեմք :

Գանձ սրբոց Մխիթարայ Ճգնաւորին : ՁԲ

Գերազանցելով․ գերադասն գոլով․ գերահրաշ
գործով:
Սուրբ հարքդ հոգւով․ մաքուր խորհրդով․
բարի հաւատով:
Զնեղութիւնս ածելով․ յանձին ունելով․ մինչ
յաղթեալ քնով:
Անհանգիստ մարմնով․ անքուն գիշերով․ 'ի
յոտին կալով:
Նմանեալ հարանց․ քաջացն 'ի նախնեաց․
և առաքինեաց:
Դասք ճգնաւորաց․ և սուրբ միանձանց․ և
կրօնաւորաց:

 Հարք

Հարքդ գերագանց · համեմատ զօրաց · ան-
մարմնականաց ։

Նեղեալքն անդորրած · բերկրեալքն տխրած ·
տխրեալքն բերկրած ։

Օ՛գնութեամբ սրբոցս 'ի մարմնի՝ զմեզ ըն-
կալցիս պատարագ բանի , Աղաչեմք ·

Գանձ Հարանց անապատականաց · ԶԳ·

Երջանիկ գնդին · երեք հազարին · և հինգ-
հարիւրին ։

Հարիւրաւորին · հազարաւորին · և բիւրաւո-
րին ։

Որ հետեւեցին · կենաց քարոզին · աւետարա-
նին ։

Ի բանից վիմին · որոյ կերտեցին · մեծ տաւա-
քելին ։

Յեղխալտս իջին · 'ի պաղ տխաալին · և ան-
դէն կային ։

Նոքէն հիմն եղին · և հաստատեցին · զկրօ-
նաւորութիւն ։

Յորոյ անուանին · և երանելին · անտօն մե-
ծազգին ։

Որ յեկեղեցին · լուաւ հրամանին · աւետա-
րանին ։

Թէ որք կամիցին · զկեանս յաւիտենին · աստ աղքատասցին :

Եւ ապա լինին · ժառանգորդ վերին · արքա- յարանին :

Բարեխօսութեամբ սրբոյս ընծայել՝ զմեզ ըն- կալցիս պատարագ բանի , Աղաչեմք :

Գանձ սրբոց Սուքիասեանց · ՁԳ.

Ռամիկն որ ընտրեալ · խաչով շատացեալ · բա- ւականացեալ :

Նոյին օր մերձեալ · վախճանն մօտեալ · կա- տարած հասեալ :

Սուքիաս տեսեալ · ազատ մի եղեալ · յալա- նաց ւ եկեալ :

Առ նոսա հասեալ · արեամբ թաթաւեալ · դիշախանձ եղեալ :

Իսկ նա յարուցեալ · զեղբարսն կոչեալ · զե- րազն պատմեալ :

Առ ժամայն եկեալ · բաւրահոյ հասեալ · որ դրախտ անուանեալ :

Յառաջ խոստացեալ · պատիւն տացեալ · որք ո՛չ հաւանեալ :

Ապա չարչարեալ · զնոսա և տանջեալ · ւ յե- տոյ հրով այրեալ :

Ապա սիրով զննեալ. և այնպէս Թաղեալ. զնոսա և գնացեալ :

Ամօք հեռացեալ. ժամանակ անցեալ. կոստանդին Թաղեալ :

Ահա ընկալ զերգս մեր հնչին՝ միջնորդութե՟ աղօթից նոցին, Աղաչեմք :

Գանձ սրբոց Կուսանաց : ՁԱ

Որ անպարտելի. սիրով յաշխարհի. բնակեալդ 'ի կուսի :

Կոյս այս գովելի. քումդ առագաստի. եղեալ արժանի :

Սանդուխտ մեծազգի. դուստրն արքայի. սանատրուկ չարի :

Թեկղ յիկոնացի. հաւատով բարի. առաքելուհի :

Պեղիգեայ կուսի. և եփրոսինի. և անաստասի:

Եւ ռիփմ ցանկալի. վառվառ գովելի. և մարիանի :

Եւգինեայ կուսի. և մանուշակի. և յուլիանի:

Հռիփսիմէն արի. ընդ գայիանի. մանէ և նունի :

Ահա սրբեա զմեզ 'ի մեղաց՝ բարեխօսութե՟ սրբոց կուսանաց, Աղաչեմք :

Գանձ սրբոյն Հռիփսիմեանց · Զ.Օ

Անտամնոր ծաղէ · որեն յերեւէ · որեն 'ի յանձնէ :

Զկուսն հոխոխաճէ · զհոգին հրաշալէ · ըզմարմինն փայլէ :

Զոր կայսրն լսէ · զխոկչքամանէ · ու 'ի խնդիր ելնէ :

Իսկ դայեկանէ · առեալ զհուխախմն · յարեւելս դիմէ :

Անտի յառաջէ · որ հոգւոց վանքն է · պատկերն փայտ է :

Անտի երանէ · 'ի սաստ ժամանէ · որ վարդջեանն է :

Եւ անդ ամփոփէ · զսուրբ նշանն որ է · 'ի կենաց փայտէ :

Ընկալ զըմնս մաղթանաց՝ բարեխօսութեամբ սրբոց հռիփսիմեանց, Աղաչեմք :

Գանձ Աւետարանի Աւետարանի · ԶԻ

Բարունդ երկնային · բանից մարդկային · տէր տուեր ազին :

'Ի տանմէ հայկէն · զորդի արքայն · զորդար յուրհային :

Եդեսա քաղաքին · ՝ի միջագետսին · յասորես-
տանին ։

Ընդ հասեալ Թադէ · աւետարանէ · և լու-
սաւորէ ։

Ջրով մկրտէ · շնորհօք բժշկէ · որ յաւա-
զանէ ։

Բարեխօսութե՛ սուրբ Թագաւորին՝ բժշկեա՛
զմեզ որդիդ միածին ,

Աղաչեմք

Գանձ Տրդատայ Թագաւորին ։ ՁԸ.

՝Ի գալ Հռիփսիմի · և Գայանի · Թագադար-
մուհի ։

Որ պատճառ լինի · հայոց հաւատոյ · և վրաց
ազգի ։

Եւ Տրդատ որդի · ձեռամբ Գրիգորի · մեր
լուսաւորչի ։

Յեփրատ մկրտի · Յովհաննէս կոչի · լոյս
կամար կապի ։

Նաև Աշխենի · Թագուհւոյն մեծի · Խոսրո-
վիդխտի ։

Յաւուրս յիշատակի · սուրբ քառասնորդի ·
աւագ պահոցի ։

Մի անգամ ճաշի · Տրդատ գովելի · ամբայն

արմենի ։

Բարեխօսութբ͞ սրբոյս ընծայեալն՝ արժանացո՛
զմեզ քաւութեան ,
Աղաչեմք ։

Գանձ Կոստանդնուպօլսոյ Ընծայութեան ։ Ձթ

Գերարփիւռ վերին ․ լոյսդ լուսածին ․ արքայդ երկնային ։

՚Ի պատկեր քոյին ․ թագաւորք կարդին ․ կոյսերք մակագրին ։

Ինքնակալ կայսրին ․ մեծ թագաւորին ․ կոստանդիանոսին ։

Ազգն գոթային ․ զոր ժողովեցին ․ զէ պատերազմին ։

Այլ տէրդ վերին ․ տայ սրտի նորին ․ քաջալերութիւն ։

Զնշան սուրբ խաչին ․ ցուցեալ ՚ի յերկին ․ գրով աստեղին ։

Թէ այսու նշանին ․ յաղթեա՛ հեծելին ․ մեծ պատերազմին ։

Յայնժամ ըստ գրին ․ զխաչն զէն առին ․ և ՚ի մարտ խմբեցին ։

Որով յաղթեցին ․ հալին վանեցին ․ և հալածեցին ։

Բարե-

Բարեխօսութեամբ սուրբ Թագաւորին՝ զմեզ
ընկալ պատարագ բանիս, Տ. աղաչեմք :

Գանձ Թէոդորոսի Ռազմաւորին: Գ.

Զինուորական · տեսեալ նախնական · եւ
զգահն ինքնիշխան :

Թէոդորոս անուան · աստուածատրական · սպա-
նիական :

Զթագն արքայական · արծիւն յանդիման ·
եդ գլխոյն արժան :

Եւ նա ազգական · նիկիադաւան · քրիստոնէ-
ական :

Ո՛չ քուն մարմնական · հոգս աշխարհական ·
ունէր կարացան :

Տիւ աքնողական · գիշերն 'ի լման · կայր ա-
ղօթական :

Բարեխօսութեամբ սրբոյս ըղձական՝ արժա-
նացո զմեզ քաւութեան, Տ. աղաչեմք :

Գանձ համօրէն Մարտիրոսաց: Գ.Տ.

Ոմանք չարչարեալ · և զարիւնս հեղեալ · և
պսակաւորեալ :

'Ի վայր կախեալ · զմորթին ուիկ հանեալ ·
զմարմինն յօշատեալ :



'Ի

՚Ի բանս արգելեալ․ անօթի թողեալ․ ան- սուաղ պահեալ ։

Ծանօթիւք ատեցեալ․ խեցիւ հարուածեալ․ աղիւ մորմոքեալ ։

Վառեալ ատրեցան․ վիրօք խոցեցան․ և չար- չարեցան ։

Գձղօք ծակեցան․ ջուանով կախեցան․ քեր- չօք քերթեցան ։

Գանիւ տանջեցան․ մահու մատնեցան․ և գլխատեցան ։

Ո՛յք որք ընտրեցան․ ողջախոհեցան․ կու- սութիւն ստացան ։

Բարեխօսութեամբ սուրբ մարտիրոսաց՝ շնոր- հեա՛ մեզ տէր քաւութիւն մեղաց, Աղաչեմք։

Գանձ Մանկանցն Բեթղեհեմի ։ Դ. Բ

Զբնազարդեալ մանկունս գգուանաց․ յանկըշ- տակեալ ՚ի մարցն գրկաց ։

Կաթն ՚ի յարիւնս խառնեալ անմեղաց․ գոչ- մամբ ճչիւն մարցն ընդդէմ դահճաց ։

Մանկանցն յահէ սրոյն ազանդաց․ ՚ի գիրկս մարց խուճապ տագնապաց ։

Հրաման սաստիկ էր զօրականաց․ առ ՚ի բառ- նալ զձեզ ՚ի կենաց ։

Լինել վերոյ ձեզ բանին կենաց • նորածնունդ
աւազանին մաքրոց ։
Բարեխօսեցէք առ տէրն ամենի՝ զմերս ընդունել պատարագ բանի , Աղաչեմք ։

Գանձ սրբոց Մարտիրոսաց ըստ խորհրդոյն ։ Պ. Գ.

Բազմից ազգաց հայոցս տոհմի • քաջն վարդան
եղեւ հանճեք ։
Կամօք բոլոր իշխանաց հայոց • եւ հրամանաւ
սահակ պարթեւի ։
Սուրբն վարդան առ կայսրն առաքի • եւ մեծաշուք ’ի ստամբօլ մտի ։
Անձի կայսերն յանդիման նստի • Թէոդոսու
փոքու արքայի ։
Եւ ’ի նմանէ սիրով մեծարի • ըստ սահակայ
սրբոյն նամակի ։
Բարեխօսութեամբ սրբոցս ընծայել՝ զմերս ընկալցիս պատարագ բանի ։
Աղաչեմք ։

Գանձ սրբոց Ոսկեանց ըստ խորհրդոյն ։ Պ. Գ.

Ի սէր քո վառեալ • բազումք չարչարեալ •
վասն քո մեռեալ ։
Են որ հալածեալ • են որ մերկեալ • եւ խոս


տանջ

տոլմնեալ:

Յաշխարհէ զատեալ. 'ի տանց հեռացեալ. և
տարամերժեալ:

Վարուց զխմեցեալ. դէմ չարին զինեալ. և
արիացեալ:

Զոր այսօր տօնեալ. և բանիւ պատուեալ.
փառօք պսակեալ:

Ստամն զալեալ. մանանձիւհ ընտրեալ. փառս
զեղապարգեալ:

Զքեզ տէր զաւանեալ. քեզ հաւատացեալ.
'ի քեզ յուսացեալ:

Բարեխօսութեամբ սորայս ընծայեան՝ արժա-
նացո զմեզ քաւութեան, Աղաչեմք:

Գանձ սրբոյն Սարգսի զօրավարին. Գ.Ն

Անձնապայծառ փառօք զարդարեալ. եկեղեցի
պայծառազգեստեալ:

Յիշատակս զինուորին ընտրեալ. սորոյն սար-
գսի որ այսօր տօնեալ:

Յարեւմտից յարեւելս եկեալ. և առ շապուհ
արքայն գնացեալ:

Իսկ նա սիրով զնա ընկալեալ. ուրախութեամբ
զնա մեծարեալ:

Արքունական պատուով ճոխացեալ. զօրաց
խորց

խորոց զօրավար կարդեալ։
Բարեխօսութեամբ սրբոյն սարգսի՝ զմերս ըն-
կալցիս պատարագ բանի, Աղաչեմք։

Գանձ սրբոյն Մինասայ՝ Երմոգինեայ և Գրափոսի։ Գ․Օ․

Երանելի վկայքն պատուեալ․ երմոգինէս և
մինաս ընտրեալ։
Աստուածային շնորհօք զարդարեալ․ զհաւա-
տացեալսն ուրախացուցեալ։
Երմոգինէս աստիճան առեալ․ եպիսկոպոս ՚ի
հոգւոյն օծեալ։
Մաքսիմիանոս արքայն դիտացեալ․ և առ նո-
սա փութով ժամանեալ։
Զերմոգինեայ զկողն խոցեալ․ զոտս և զձեռս
նորա հատեալ։
Սուրբն զօրաւոր զնա յանդիմանեալ․ և զկու-
րութիւն մտացն յայտնեալ։
Իսկ բռնաւորն ընդ այն բարկացեալ․ զվկայսն
երիս անդ նահատակեալ։
Բարեխօսութեամբ սրբոյն մինասայ՝ գթա՛ ՚ի
մեզ տէր յիսուս արքայ, Աղաչեմք։

Գանձ սրբոյն Գէորգայ զօրավարին։ Գ․Լ։

Արմատ կենաց՝ զարմ՝ ՚ի յազատաց․ գէոր-

դէտս յաղթօղն 'ի դամբոյ :

Ահագնատես 'ի զօրականաց . առեւծաձեւ 'ի
պարս բազմաց :

Գէորգէոս տեսչեամբ հրեշտակաց . անդըր-
դուելք հաւատ զերազանց :

Կացեալ յատեան մնոտի իշխանաց . պատաս-
խանի առնէր ներհակաց :

Անարգելով զպաշտօնն դիւաց . եւ քարոզէր
զմեծն բարձանց :

Բարեխօսութեամբ սորայն գէորգի՝ զմեզ ըն-
կալցիս պատարագ բանի, Աղաչեմք :

Գանձ Կիրակոսի եւ մօրն նորա Օշինայ : Դ.Ր.

'Ի տուրացից երկրէն հալածի . եկեալ բնակի
յերկիր կիլիկի :

Անծահաւատ վկայն քրիստոսի . սուրբն օգէ-
տա տիկին մեծազգի :

Անտի քաղաքն մեծ տարսօնի . սրբոյն հաւատն
յայտնի լինի :

Յանհաւատից յատեանն տանի . կերակուր
մանկամբն իւր բարի :

Զօրայն 'ի մօր գրկանց առնլով . աղէքսանդ-
րոս եւ համբուրելով :

Եւ զօղեալ անխնայ տանջելով . չարչարէին



զնա

զնա քերելով ։

Եւ կիրակոս 'ի նա հայելով · զոր ինչ լուեր՝
զնոյն երկրպագելով ։

Ուրախութե՛ սրտին համբուրէր · և զչար
տանջանս յանձինս ընդունէր ։

Սբ կիրակոս 'ի մայրն հայէր · և զոր լսէր՝ զնոյն
երկրպագէր ։

Իբր աղաւնի քաղցր բարբառէր · զյիսուս քրիս-
տոս աստուած դաւանէր ։

Բարեխօսութեամբ սրբոյ ընծայք՝ զմեր ըն-
կալցիս պատարագ բանի · Աղաչեմք ։

Գանձ տաղաչափաբանեան ։ Դ.Թ

Ես եմ խաւարեալ · ես մեղօք մեռեալ · ես
նեխեալ փտեալ ։

Չեմ յուխտին կացեալ · չեմ զօրէնս պա-
հեալ · չեմ բարիս գործեալ ։

Այլ յոյժ տարագրեալ · և եմ տարակացեալ ·
դարտուղի շրջեալ ։

Կենօք տառապեալ · մեղօք զառածեալ · յան-
ցանս յերկարեալ ։

Օ բարիս ո՛չ գործեալ · զչարեգործս սորեալ ·
զխրատս անարգեալ ։

'Ի մեղս ջեռեալ · 'ի բարիս սառեալ բոյս բա-

ըն չքնաղեալ :

Ծնաւս անպատաղացեալ • տեսանելս գօտացեալ •
յարմատոց խլեալ :

Ո՛չ ջերմ արտասուեալ • ո՛չ պահօք սրբեալ •
այլ յոյժ աղտեղեալ :

Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յայս սուրբ
կիւրակէի յաւուրս տէրունի ,

Աղաչեմք :

Գանձ տաղաչափութեան : Ռ

Մեղայ տէր մեղայ անօրէնեցայ զպատուիրանն
յանցեայ :

Յանցաւոր գտայ • յօրինաց շեղայ • քեզ յա-
չաց ելայ :

Զլոյսն մերկացայ • 'ի դրախտէն ելայ • փա-
ռաց զրկեցայ :

Բոյժ գրկաց անկայ • շնորհաց հեռացայ • չա-
րեօքս որ մեղայ :

Մեղաւորս վայ • հոգւովս մեռայ • և 'ի մեղս
թաղեցայ :

Անդարձ որոշայ • գլորեալ չկանգնեցայ • այլ
և հեռացայ :

Իմ տէր քեզ մեղայ • յօգնել ինձ փութա •
տուր ձեռն և կանգնեա :

Քաղցր բարբառեա · ձայնիւդ կոչեա · և'ի
քեզ ժողովեա :

Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յայս
սուրբ կիւրակէի յաւուրս տէրունի, Աղաչեմք:

Գանձ տաղաչափութեան : ԾԱ.

Փառօք պնդեցուք · յաղօթս յամեցուք ·
զձեռս 'ի սուրբ կալցուք :

Զգուշով նուաստասցուք · սուգ մեղաց զգեց-
ցուք · վշտաց հեղասցուք :

Զօրէնս սիրեսցուք · սրբութեամբ կացցուք ·
և արդարասցուք :

'Ի մեզ հայեսցուք · մի' զայլս քննեսցուք · և
մի' դատեսցուք :

Զսիրտս սրբեսցուք · զմիտս լուասցուք · զան-
ձինս մաքրեսցուք :

Զչարն յանցանաց հանցուք · 'ի մէնջ հեր-
քեսցուք · և հալածեսցուք :

Ողորմած լիցուք · բարիս արասցուք զկրեար
սիրեսցուք :

Առ մատիցուք · համարձակեսցուք · և հա-
ղորդիցուք :

Ընդ տէր միասցուք · հաւատարեսցուք · և միշտ
գոհասցուք :

Գունչ տպաշխատութեան։ ՃԻ

Սուտ կենցաղոյս այս մի՛ հաւատայք. զաշ-
խարհս ձեզ մնալ մի՛ գնէք։

Ամէն սուտ է զոր և տեսանէք. ցնոր և երազ
խաբօղ թէ գիտէք։

Դարձ տուք մեղաց և այլ մի՛ գործէք. որ
փոշիման քան զիս չի՛ մնայք։

Զդատաստան ուղիղ արարէք. մարդոյ ումէք
զրկանք մի՛ առնէք։

Զորբն և զայրին մի՛ վշտանոյցէք. և յիրե-
րաց խուսել մի՛ կենայք։

Յաղտ աշխարհիս այս մի՛ շաղախէք. այլ զձեր
անձինդ մաքուր պահեցէք։

Յաղքատութիւնս յոր ժամանեցայք. այս
մեծ զարիս որ հանդիպեցայք, Աղաչեմք։

ՎԵՐՋ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

10n

790

14

002740X